ԱՐԵՒԵԼԵԱՆ

ՀԱՄՈՒԼ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

26Դ ՏԱՐԻ

1896

ԹԻՒ 13 ՅՈՒԼԻՍ 1

ԽՄԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ
Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻՔ
ՏՊԱԳՐ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ո՞Վ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԿԸ ԽՈՐՀԻ 387
ՀՌՈՄ (Յ. Մ. Էսայեան) 388
ՄԵՌԱ՞Ի (Մ. Ն.) 393
ՍԵՒ ԴԻՇԵՐԸ (Լուսի Տիլպէրեան) 397
ՁԱՅՆ (Տօրթ. Փաշաեան) 398
ՏԱՐՎԻՆԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ (Ա.) 401
ՀԱՅՏԵՐԷՆ ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ (Ն. Պ.) 403
ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ 408
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ (Խ. Բ. Տ. Վարդանեան) . . . 415
ԻՄ ՁԱՐՄԱՆԱԼԻ ԿԻՆՍ (Գրեցեալ Ա. Մ-ԸՆ)

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Թէև խմբագրութիւնս իր Յունվար 15 (Թիւ 2) Ա. Մ-ԸՆ մէջ յայտարարած էր որ իր Կ. Պոլսոյ գործակալութիւնն դադրեցուցած էր Պէրպէրեան Էֆէնտիի հրաժարումը, սակայն Մեծ. Տիգրան էֆ. Ձիվէլէկեանի սիրայօժար առաջարկն՝ յիշեալ գործակալութիւնն ստանձնելու համար՝ խմբագրութիւնս շնորհակալութեամբ ընդունելով՝ այս յայտարարութեամբ կ'ծանուցանէ Կ. Պոլսոյ մերայնոց, որ՝ կրնան նաև գիմել Ճուրէնեան Պատ. խմբագրատան՝ Ձիվէլէկեան Տիգրան Էֆէնտիի գրատունը, Պ-ՂԷ-Աւէ Ձորոնէ թ. 20 և Ա. Մ-ԸՆ բաժանորդագրուիլ։

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ս. ՍԻՎՐԻՍԱՐԵԱՆ ԵՒ ԸՆԿՔ

ՍԵՓ ԳՈՒՅԱԳՈՒՅՑՈՒԹԻՒՆ

Այն հանրաւաւոր վճռաւատուն՝ ուր կը ծախուին զանազան բանգակներն, բրգերն, մեռաքսերն նիւթեր, վաղուց կը վայելէ ոչ միայն Իզմիրի ամեն հասարակութեանց հաճարումն, այլ և իր բոլոր գաւառային յաճախորդներուն վստահութիւնը որ արդէն քաջ դնահատած են իր ապրանաց ընտրութեան, ազնուութեան, լաւութեան, չափերու ճշտութեան և գիներու անհամեմատ չափաւորութեան զգալի առաւելութիւններն, այնպէս որ մինչ գոհ մնացած և այն վճռաւատունը պատուած են իրենց յանձնարարութեամբ, ինչպէս ցարդ նոյնպէս և այսուհետև Սիվրիսարեան վճռաւատունն պատրաստ է միևնոյն դիւրութիւններն ընծայել տեղւոյս յաճախորդներուն, և յատկապէս գաւառայնոց ուշադրութիւնը կը հրաւիրէ վերոյիշեալ առաւելութեանց վրայ։ Պարտին վստահ լինիլ թէ իրենց յանձնարարութիւններն գրով կամ գործակատարներու միջնորդութեամբ, ամենայն ճշտութեամբ ու փութով պիտի կատարուին։ Ընտրակոյս գաւառացի և տեղացի նոր յաճախորդներ պիտի փութան, անձամբ դիմելով փորձել, ապրանաց գերազանցութիւն, Սիվրիսարեան ընդարձակ մթերանոցներու մէջ՝ որ կը դանուին՝

ՍԻԹԻ ՕՖ ՊԱՐԻՍ
(CITY OF PARIS)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱՆԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Հրոնիդ՝ դիմ, որոշ ապահովագիններով·

Կեդրոնատեղի Ընկերութեան Բարիզ, 18 Ռ՝- Տը Լ՝ Պոնֆ
Մասնաճիւղ ի Լօնտօն, 58 Ա՝-Բէր Թէմբըլ Սիրէնդ

Հաշուեկշիռ 1894 Դեկտեմբեր 31 ի·

Ընկերութեան կոզմէ երաշխաւորեալ դրամագլուխ	ֆր·	122,779,758
Դանձուած ապահովագինք	»	382,069
Մինչև վերջիւնեալ թուականը վճարեալ վնասներ	»	276,787

Սոորագրեալքս՝ Իզմիրի և Այտրնի վիլայէթին համար՝ վերոյիշեալ Ընկերութեան ներկայացուցիչներն անուանուած ըլլալով՝ արտօնեալ ենք ընդունելու հրդեհի դեմ ապահովագրութիւններ խիստ նպաստաւոր պայմաններով, ինչպէս շէնքերու նոյնպէս կահ կարասեաց, ապրանաց, և այլն վրայ։ Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Գործակալութեան գրասենեակը, Ֆրանկայ թաղ, Արմաօի դլխարկավաճառանոցին քով Լ՝ օբալ Գաղլիների, թիւ 2։

Ընդհանուր ներկայացուցիչք և փոխանորդք

Փոխ ներկայացուցիչք Ընկերութեան Լ՝ Տըլարոշ Սէր և Ընկ·
Պ· Տիգրան Ս· Փափազեան L· Delaroche Senr & Co.

Ընդհանուր Ճարտարապետ և դնահատ Ընկերութեան
Պ· Ա· Պ· Զէքուրեէլ 7—24

ԳԱՌԻԿ ՏԷՕՔՍԷՃԵԱՆ

ՅԱՆՁՆԱԿԱՏԱՐ

Ամեն տեսակ գրքանց և տպագրական արտադրութեանց
Զանազան գրատկերներու և այլն և այլն

ԳՈՐԾԱԿՑԱԼ

«Ազգագրական Հանդէս», «Մուրճ», «Արեւելեան Մամուլ», «Լուսաւոր», «Արարատ», «Հանդէս Ամսօրեայ», «Իրատես», «Աղբիւր», «Արտասա», «Բազմավէպ», «Հանդէս Գրականական եւ Պատմական», «Հորիզոն», «Տարազ»
եւ այլն առօրեայ և պարբերական հրատարակութեանց

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ

Հրատարակչական Ընկ. Հայոց Թիֆլիսի, և այլն մի քանի ծանօթ
Գրատանց և տպարանաց

ՀԱՅԹԱՅԹԻՉ

Հ. Փիրիզի Աշխարհագրական քարտէզներու,
Եւրոպական լեզուաւ ամեն տեսակ գրքանց և հրատարակութեանց
Հաստատուած 1890 ի Բուլգարիա,

Հասցէ՝

K. Deukmedjian, ROUSTCHOUK, (Bulgarie)

Իզմիր Մամուրեան Տպարան-Գրատուն։

ԵՎԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՄԵԾ

Հայոց Ազգ Ցաղ

Դ. եւ Լ. ՇԷՐԻՏՃԵԱՆ

Պատիւ ունինք ծանուցանել Արդոյ Հրատարակութեան և մանաւորապէս մեր Պատ. Յամախորդներուն թէ վերջերս մեր վաճառատունը խիստ ճոխացուցած ենք զանազան ուսեանելիներով։

Մեզ գիմողը ամեն ինչ պիտի գտնէ շատ ժամանակ գիներով։

Ունինք նաև Այբբենարան և ուրիշներու ընտիր օգնականներ, նոյն գործատունները ծախուած գիներու վրայ ԱՒԱՆՑ առնելիմբ յանկարդրութիւն մ'ընելու։

Դիւրութեան համար մեր Յամախորդներուն նաշուառեալներուն հաշիւները մեր սովորութեան համեմատ հաշիւները ամիսը անգամ մի կը փակենք։

ԱՆՀԱՄԵՄԱՏ ԱՅՆՈՒԹԻՒՆ 13—24

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆԻ

ԱՆԿԼՈ-ԻՍԹՐԱՆ

ՔՈ-ՕՐԵՐԱԹԻՎ ԿՈՄՊԱՆԻ ԼԻՄԻԹՍ

(ANGLO-EASTERN CO-OPERATIVE COMPANY LTD.)

Ընկերութեանս Տեսչութիւնը պատիւ ունի ծանուցանել իր յաճախորդներուն, որ իր ընդարձակ մթերանոցներուն մէջ պիտի գտնեն ինչ որ կ'փափաքին ունենալ, ինչպէս՝

Բրդեղէն, Մետաքսեղէն, Կերպասեղէն, Ձերմակեղէն, Կտաւեղէն կահաւորման, Գոտակներ, Գլխարկներ և Մուճակներ։

Իրեղէնք նորաձևութեան են, Ժապաւէններ, Ծաղիկներ, Բանուածներ, ճամբորդութեան համար այլ և այլ առարկաներ,

ՏՆԱԿԱՆ ԻՐԵՂԷՆՔ, Ապակիայ և Բիւրեղեայ և այլազան Լամպարներ։ Գունաւոր թուղթ, Լինոլէում, ամեն տեսակ գորգեր։

ԳՈՀԱՐԵՂԷՆՔ Բարիզեան ապրանքներ և զանազանք կազանդչէքի համար։ Հոտեղէնք, Ջեռնոցներ, և Թղթեղէնք։ Սպիտակ մետաղէ ապրանքներ երաշխաւորեալ Մարէն և Վիկտ Լօնտրայի վաճառատանց կողմէ։

ԿԱՌԱՍԻՔ, ամեն տեսակ։ Պզնէք, Հոդէ արձաններ են։ Վաճառատունս ունի նաև մասնաւոր ճիւղ մը զգեստեղէնի, կարի, գլխարկի են։

ՈՒՏԵԼԵԱՑ ՃԻՒՂ։ Որու վրայ մասնաւորապէս Ընկերութեանս Տեսչութիւնը ուշադրութիւն կը հրաւիրէ ծախու դրուած ապրանաց ընտիր տեսակին վրայ, ինչպէս Պանիր, Ժամպոն, Կարագ, են, որ մաս առ մաս կը բերուին ամեն շաբաթ միշտ թարմ պահելու համար։ Ընկերութիւնս գնորդին ճաշակին անյարմար գտնուած ապրանքը ետ կրնայ առնուլ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՄՈՒՍ

ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԺԷ. ՏԱՐԻ

ԹԻՒ 13 — 1 ՅՈՒԼԻՍ 1896

Ո՞Վ ԻՆՔՆՈՒՐՈՅՆ ԿԸ ԽՈՐՀԻ

Ինչ դիւրութեամբ որ կարելի է ըսել — կ'խորհիմ ուստի և կամ — մի և նոյն համարձակութեամբ չէ կարելի հաստատել թէ ամեն մարդ ինքնուրոյն կ'խորհի։ Եթէ խորհելն արհեստ մ'է որ մտային կարողութեանց ուղիղ մշակութեամբ կ'ստացուի, մշակութիւն՝ որ բանաւոր դաստիարակութեան մը գործն է, ինքնուրոյն խորհելու և աղատօրէն իր խորհուրդն արտայայտելու կարողութիւնը շատերուն բաժինը չէ։ Մինչև անգամ անոնք որ խորհելու ձիրքն ունին սպէպ այլազան ազդեցութեանց բերմամբ այդ ձիրքն ի գործ դնելու վիճակին մէջ չեն գտնուիր, թող թէ համարձակ խորհելու։ Այս վերապահութեան կամ ապիկարութեան պատ-

ճառները չէ թէ միայն յետադէմ այլ լուսամիտ ազգերու մէջ կ'դանուին և մեծապէս կ'վնասեն հանրութեան իմացական զարգացման։ Անկախ մտածումն անկախ պայմաններու մէջ անդամ կ'վարանի ստէպ երևան գալ, թո՛ղ այն միջավայրի մէջ՝ ուր համարձակախօսութիւնն այլազան խոչնդոտներու կ'հանդիպի։ Եւ ճշմարիտ խորհող մը գերբնտիր ու ազդեցիկ դորձակ մ'է լուսաւորութեան ծաւալման մէջ։ Շէյքսպիրի Կեսարէ մէջ. երբ սոյն վեհապետն կ'տեսնէ Պրուտոսը կ'ըսէ. — չեմ հաւներ այս մարդը, վասն զի խոհուն դէմք մ'ունի։ Եւ կեսար իր սրամտութեամբ կ'դնահատէր մտածման զօրութիւնը։

Ընկերական զանազան յարաբերութիւններ, առևտրական շահեր, պատշաճութեան կանոններ, նախապաշարումներ, քծուծ ու զօրեղ կիրքեր, նոյնպէս մանր մունր նկատումներ այնքան կ'սեղմեն, կ'ճնշեն ու կ'մթագնեն անձերու և իրերու վրայ քաջ խորհելու կարող գլուխներու ըղձերն, որ խորհելու ծանր նեղութենէ հրաժարելով՝ տարբեր ազբիւրներէ կ'սպասեն այլ և այլ խնդիրներու վրայ կարծիք կազմելու տարբեր։ Այժմ այդ ազբիւրներն են գլխաւորապէս օրագրական և պարբերական թերթերն՝ որ անխտիր հիմնաւոր կամ անհիմն տեսութիւններ կ'սփռեն ու ծաւալեն ժողովրդեան վերին ու ստորին խաւերուն մէջ, ժողովուրդ՝ որ ստէպ իրարու ներհակ թերթերէ լուրեր, ծանօթութիւններ ու գիտողութիւններ քաղելով՝ խառն ու շփոթ գաղափարներ իր գլխուն մէջ կ'տեղաւորէ և միշտ անկարող կ'դանուի որոշ եզրակացութեան մը հասնիլ։

Անտարակոյս այս պատճառաւ է որ այս օրերս Լորտ Ռոզպերի՝ ազատ և հոյակապ մատենադարանի մը բացման առթիւ, Բասմոր Էտվըրտս վեհանձն բարերարին պարգևը, իր արտասանած ատենաբանութեան մէջ խորհելու կարեւորութեան վրայ շատ իրաւացի խորհրդածութիւններ ըրած և դրադարաններու հրահանգիչ և օգտաւէտ ներդործութիւնն, ժողովրդեան համար, շեշտած է։

Անուանի տաճնաբանը կ'ցաւի որ խորհելու արհեստը հետզհետէ կ'կորուսի Անգլեայ մէջ։ Միթէ հաւատալի՞ է։ Բազմաթիւ են, կ'ըսէ, այս երեւոյթին, այս է՝ անկախ մտածման դէմ ելած վտանգներն, և ամենէ մեծն կ'ներկատէ մամուլը, որու բոլոր արժանիքը դնահատելով հանդերձ, զայն անկախ մտածման ամենէ մեծ թշնամիներու կարգը կ'դասէ։ Յետոյ կ'բացատրէ թէ ինչպէս այլազան թերթերէ և հանդէսներէ անդլիացի հասարակ ընթերցողն կ'ընդունի հատ ու կտոր գաղափարներ, զորս կշռելու և ուղղելու ոչ ժամանակ և ոչ կարողութիւն ունի։ Այս տարասեր ու տարաբուն ծանօթութիւններով կ'սովորի չինել իր ուզեղը, սովորութիւն՝ որ աններպատա է ազատ մտածման։ Կ'գովէ նաև այն բարձր խորհուրդներն որ կ'ծաղին ու կ'ծաւալին ծանրախոհ հրապարակագիրներու շնորհիւ, բայց կ'փափաքի որ այդ խորհուրդներն հասարակութեան մէջ ևս ծնունդ առնուն։ Հետևապէս ինքնուրոյն մտածման զօրաւորագոյն շարժառիթը կ'համարի հանրային մատենագրանն՝ որ հասարակ ընթերցողն կընայ բանկրուն առաջնորդներու օգնութեամբ՝ ոչ միայն ընտիր գործերու վերծանութեամբ իր ուսման ծարաւը գոհ ընել այլ և լուրջ և յոտակ գաղափարներու տիրանալ ու իր խորհելու կարողութիւնը զօրացնել։

Ասէպ ըսուած է և հարկ է կրկնել թէ՝ հասուն տարիքի համար կրթութեան կարևոր կոյսն մ'է մանաւանդ հանրային ընթերցատունը, մատենագրանն, ուր ամեն կարգի և տարիքի մարդիկ յաճախելով՝ մտաւորական անհրաժեշտ պէտք մը լեցնելէ զատ՝ այլ և այլ անօգուտ և անչոգ գրօսանքէ հեռու կ'մնան և բարոյական զգալի ներգործութիւն մը կ'ունենան իրենց տպրած միջավայրին մէջ։

Եթէ ոչ բարձր, ինքնուրոյն խորհիլ ու գտտել և կենցաղ ընթացքը ուղղել բանականութեան և արդարութեան օրինաց համեմատ՝ տառապելութիւն մ'է որ այն թշուառ այխարհիս մէջ զէթ ոմանց գոհունակութեան մը նշոյլը կ'ընծայէ մեզ։

Ուրախալի երևոյթ մ'է որ հետզհետէ զանազան հայաբնակ երկիրներու մէջ՝ կրթիչ հանրային հիմնարկութիւններ հաստատելու և ժողովրդեան մէջ ուսումնասիրութիւնն զրգռելու եռանդն օրէ օր կ'աւելնայ։

ՀՌՈՄ

Ցետոյ Բիէռ պապին աշխարհական իշխանութեան վրայ կը խօսէր, բայց ազատ կերպով և առանց ոչ իսկ երկիւղի։ Անշուշտ չէր անդիտանար թէ իր Խոտիոյ հետ ունեցած կռուին մէջ, Պապը անվթար պահել կ'ուզէր, այնքան յամառ կերպով որքան ի սկզբան, իր Հռոմի վրայ ունեցած իրաւունքները — բայց կ'երևակայէր թէ պարզ ընթացք մ'էր սա զոր պարտաւոր էր, զոր հարկադրեալ էր բռնելու քաղաքական պատճառներու համար և որ պիտի դադրէր անմիջապէս երբ որոշեալ ժամը հնչէր։ Ինք համոզուած էր որ՝ եթէ երբէք Պապը աւելի մեծ երևած չէր քան այժմ, իր աշխարհական իշխանութեան կորուստին կը պարտէր այս իր իշխանութեան ընդարձակումն։ Ի՛նչ երկար պատմութիւն կրնար չինուիլ այն աղետալի սխալներու և կռիւներու վրայ որք տակնուվրայ ըրած էին աշխարհս, Հռոմի այս փոքրիկ թագաւորութեան համար, տասնհինգ դարէ ի վեր։

Եւ Բիէռ կ'աւարտէր իր դիրքը խանդավառ բոցով երևակայելով նոր Հռոմը, հոգևորական Հռոմը՝ որ պիտի թագաւորէր քիչ առաջներն հաշտուած ժողովուրդներու վրայ, իրարու ձեռք ձեռքի տուած, եղբայրական սիրով այրող։ Իր զնայլումին մէջ մինչև իսկ նախապաշարումներու վախճանը կը տեսնէր։ Այն աստիճան յափշտակուած էր որ, առանց ուշադրի յարմակում մ'ընելու կրօնքի հիմնական սկզբունքներուն դէմ, մինչև անգամ ընդարձակուած կրօնական զգացումի մը երազը կը տեսնէր, կրօնական զգացումի մը՝ ազատ ամեն ծէսերէ և բոլորովին նուիրուած մարդկային ողորմասիրութեան միակ գոհացումին, և դեռ ևս վիրաւոր իր Լուրթի համբերութենէն՝

*Տե՛ս Ս. Մ՝ Ֆ՝ Ա, թիւ 12։

տեղի տուած էր իր խոցոտ սիրտը գոհացնելու պէտքին։ Լուրտի այս նախապաշարումը, մինչեան Ծանր, մինչեան ստորին, չափէ դուրս տանջուած ժամանակի մը նոպկալի նշանը չէ՞ր միթէ։ Այն օրը ուր Աւետարանը բովանդակ աշխարհի վրայ պիտի տարածուէր ու զօրացուէր, տառապողները պիտի շերթային այլևս փնտռել այնչափ հեռո՞ւ, այնքան ողորմելի պայմաններու մէջ, խարուսիկ սփոփում մը, ստոյգ ըլլալով այն ատեն թէ կրնան սփոփիլ ու բժշկուիլ իրենք իրենց մէջ, իրենց ընտանեկան յարկին տակ, իրենց եղբայրներուն մօտ։ Լուրտի մէջ բազմի անարդար տեղափոխութիւն մը կար, սոսկալի տեսարա՞ն՝ որ ստուեր կը բերէր Աստուծոյ վրայ, պայքարի անընդհատ շարժառիթ մը՝ որ պիտի անհետ ըլլար վաղուան իրապէս քրիստոնեայ ընկերութեան մէջ։ Մ՚ն, այս ընկերութիւնն, այս քրիստոնեայ հասարակութիւնն էր՝ որու մօտաւոր գալստեան բուռն փափաքով Բիբլիի գիրքը կը լմննար։ Քրիստոնէութիւնը վերջապէս արդարութեան և ճշմարտութեան սուրբ կրօնքը կ՚ըլլար վերստին հարուստներու և զօրաւորներու ձեռքն անցնելէ առաջ։ Պզտիկներն ու աղքատները կը բաժնէին երկրիս ինչքերը իրենց մէջ, այլևս ուրիշ բանի չի հպատակելով այլ աշխատութեան հաւասարակշիռ օրէնքին։ Պապը միայն կանգուն ժողովուրդներու այս դաշնաւորութեան գլուխը՝ իր խաղաղութեան վերհսպետ, բոլոր էակները միացնող բարոյական օրէնքը, ողորմասիրութեան և սիրոյ միակ կապը ըլլալուն գերագոյն պաշտօն ունէր։ Եւ միթէ Քրիստոսի խոստումներուն մօտաւոր իրագործումն չէ՞ր այս։ Գուշակութիւնները պիտի կատարուէին, քաղաքային և կրօնական ընկերութիւնները պիտի ծածկէին գիրար, պիտի միանային իրարու այնքան կատարեալ կերպով որ այլևս մէկ մարմին պիտի կազմէին, յաղթութեան և երջանկութեան ոսկեղարը պիտի ըլլար այս, գուշակեալ ամբողջ մարգարէներէ. այլ ևս ոչ կռիւ կարելի էր և ոչ հակառակութիւն մարմնոյ և հոգւոյ միջև։ Հրաշալի հաւասարակշռութիւն մը պիտի առաջ գար որ պիտի ըսպաննէր չարիքը, և որ աշխարհիս վրայ պիտի ստեղծէր Աստուծոյ թագաւորութիւնը։ Նոր Հռոմը, կեդրոն աշխարհիս, պիտի տար աշխարհիս նո՞ր կրօնքը։

Ահա այս է էական իմաստն այն գիրքին զոր գրած է Բիբլիոն։

Ինչո՞ւ համար մատենարգել ժողովը «արգիլեալ գրոց ցանկին» մէջ դնել կ՚ուզուեցաւ դայն։ Բիբլիոն իր չափազանց մտքին

մէջ կ'դարձնէ ու կը դարձնէ այս հարցումը անընդհատ, առանց կարենալ դանելու թէ օրոնք են ակնարկուած վերատակարկ-ները։ Ամենքն ալ ամենաջինջ քրիստոնէութեամբ այրող կ'երե-ւին իրեն։ Բայց Բիէռ կը դար Հոմ աւիւնով ու քաջասրտու-թեամբ դողդոջուն, կ'ամաչարէր Պապին ծունգերուն իյնալու, անոր օրհնութիւնը ստանալու ինքզինք, ըսելով անոր թէ՝ ոչ մի տող գրած էր առանց ներշնչուելու անոր ոգւով, առանց փարելու յաղթութեան անոր քաղա-քականութեան։ Կարե՞լի էր միթէ գտնել գիրք մը որ ամենանենգ կերպով վճռաբանած էր Լէոն ԺԳ-ը, օգնելով անոր — իր քրիստոնէական միութեան և սիեղերական խաղա-ղութեան գործին մէջ։ Ո՜ւ, թոնել Հոմը, սեղմել զայն, իմա-նալ անմիջապէս այն զոր եկած էր խնդրել անկէ, ճակատագիր վճռող այս՝ կամ օ՞չը։ Որիշ փորձ մ'էր այս, Լուրաէ վերջ, բայց աւելի ծանր, աւելի վճռական, որմէ կ'զդար թէ կամ ամ-բացած պիտի դուրս գար, կամ յաւէտ կայծակնահար։ Չէր խնդրեր այլեւս աղեկի մը պարզ ու խեղճուկրակ հաւատքը, այլ իմացականին գերազոյն հաւատքը, հաւատք մը՝ որ կը բարձ-բանար ծէսերէ ու խորհրդաւոր նշաններէ և պատկերներէ վեր, որու նպատակն էր ամենամեծ կարելի երջանկութիւնը մարդ-կութեան, հիմնուած իր ստուգութեան պէտքին վրայ։ Իր սիրտը կը տրոփէր ուժգին։

Ի՞նչ պիտի ըլլար Հոմի պատասխանը։

Աւա՜ղ որ Հոմ բոլորովին յուսախաբ կ'ընէ զինք։ Իր երե-ւակայած, իր երազած Հոմը չի գտներ։ Սուրբ Հոմ մը, մար-գասէր Հոմ մը, քրիստոնեայ Հոմ մը կ'երազէր, այլ բոլորո-վին իր երազածին ներհակը կը գտնէ զայն։ Իր երեւակայած քրիստոնեայ Հոմը, իր երազած սուրբ Վատիկանը սև վարա-գոյրով մը ծածկուած՝ թունալից մթնոլորտի մը մէջ կ'ը գտնէ։ Կ'այցելէ բոլոր քարտինալները, բայց Լէոն ԺԳ-ի՝ այս ծերու-թեան ժամանակ բոլոր քարտինալներն ալ պապցու- ըլլալով, ամենքն ալ յետին ծայր զգոյշ ընթացք մը կ'բռնեն, և ոչ մին կը համարձակի փոքրիկ Ֆրանսայի քահանային դատը պաշտ-պանել։ Մէկէն միւսին կը դիմի, պալատէ պալատ կը քաշկռտ-տուի, խաղաթիի նման, ամենէն ալ ծաղրուելով։ Իր անենդ պարզութեան մէջ կարծած էր թէ քիչ մը արդարութիւն և անկողմնակալ քննութիւն պիտի գտնէր հոն։ բայց միայն «Էնթրիկներու» կը բաղխի, բարի երեւոյթներու տակ ծած-

կուած ատելութիւններու, քահանայապետական խոյրին հասնելու համար ի գործ դրուած խուլ հիզերու։ Այս ամենուն մէջ սակայն բան մը միայն կը թուի միացնել բոլորն ալ, այս է կատաղի ատելութիւն ամեն տեսակ նորութեան դէմ։ Այն որ տասնութ դարէ ի վեր իր խանձարուրներուն մէջ մուչիկ մուչիկ քնացող եկեղեցիի մը գիրկը նորութիւն մը կը հանէ, այն որ կը շարժի իսկ քիչ մը այս խանձարուրին մէջ, վտանգաւոր էակ մը կը դառնայ անմիջապէս և կը հալածուի անխնայ։

«Հռոմի» մէջ մեծ տեսարան մը կայ, տեսարան մը որ կարծես թէ պատկերէ ամբողջ գործին։ այս է Բիէռի տեսակցութիւնը պապին հետ։ Արդէն շատ անգամներ, և պատրաստելու համար ընթերցողը այս տեսարանին, հեղինակը նշմարել կը տայ մեզ Լէոն ԺԳ-ի դէմքը, ինչպէս կը տեսնենք յետոյ «Débâcle»-ի մէջ, Նափոլէոն Գ-ի դիմաստուերը՝ որ կ'անցնի ու կ'անցնի մեր առջևէն։ Բիէռ նշմարած է զայն արդէն Վատիկանի պատուհաններէն միոյն ետին։ և հանդիպած է անոր երեք անգամ։ «Տեսած է զայն գեղեցիկ իրիկուն մը, պարտէզներու հեշտութեանց մէջ, ժպտուն և ընտանի, մինչ սիրական եկեղեցականի մը բարբանջները լսելով կը քալէր, իր ծերուկի փոքր ու դողդոջ քայլով, վիրաւորուած թռչունի մը ոստոստումով։ Տեսած էր նաև զայն իրր սիրեցեալ և գորովագութ պապ, այտերը գոհունակութեամբ վարդագոյն, երբ կ'ընդունէր պարգևներ կիներէ, կիներէ որք կը նուիրէին անոր քսակներ, սակիով լեցուն ճերմակ գտակներ, որք կը խլէին իրենց գոհարները անոր ոտքերուն տակ նետելու համար զայնս, որք կը փափաքէին մինչև անգամ իրենց սիրտերը խլել, քաշել, նետել անոր առջև։ Տեսած էր նոյնպէս զայն Ս. Պետրոսի մէջ ուր մեծ շքեղութեամբ կը պատարագէր, քրիստոնէութեան պաշտած տեսանելի Աստուծոյ ամբողջ փառաց մէջ, իր ոսկիէ ու աղամանդէ պատեանին մէջ փակուած կուռքի մը նման, երեսը սառած, քրմական գերագոյն անշարժութեան մէջ։» Մանրամասնութիւններ հաւաքած է անոր անձին վրայ, անոր օրերուն գործածման վրայ, այն մենամղութեան վրայ զոր պահած է տակաւին՝ փակուելու իր սենեկին մէջ, հաչուելու ու համբելու համար իր գանձը, կարգի դնելու համար իր ոսկիները, պղտիկ հաւասար ծրարներ շինելու համար իր թուղթերով և վերջը՝ ամեն բան կարգադրելու, ամեն բան անհետացնելու համար անանկ թաքստոցներու մէջ զոր ինք միայն գիտէ։ Ինչ որ իր

ուշը կը գրաւէ հիմա ծերուկին տկար ու խեղճուկրակ տեսքն է, իր «փոքրիկ հիւանդ թռչունի բարակ վզով։» Պապը ունի իր քով արծաթեայ դգալով մը շաքարախառն բաժակ մը ջուր որմէ կը խմէ փոքր ումպերով։ Բիֆախոտ կը քաշէ։ Իր ծունգերուն վրայ կը բռնէ իր թաշկինակը։ Եւ միշտ այս տարօրինակ վիճը, այս «անհաւանական դերձանը, յոյժ ծեր և յոյժ սպիտակ փոքր թռչունի մը վիզը։»

Սակայն Բիէռի տանջուած դանկին մէջ, գաղափարներու վերջնական ու վճռական յեղաշրջումը այն ժամանակ կը կատարուի երբ յուսով ու երկիւղածութեամբ լեցուն՝ կը մօտենայ պապին և կ'սկսի իր գրքին պատը պաշտպանել անոր առջեւ՝ և երբ նա, իր յոյսը, իր երազներու անուշ առարկան, իր միակ ապաւէնը, սառնագին կը դատապարտէ Պէրժըրս քարտինալը, բարի ու ողորմասէր կրօնական ոգեպար մը, որու ընկերվարական գաղափարներով ներշնչուած է Բիէռ և որ զօրավիգ կանգնած է Բիէռի, իր — գերադոյն ճշմարտութիւնը, գերադոյն արդարութիւնը փնտռելու ճիգերուն մէջ — ու կ'ըսէ.

— Թո՛ղ քարտինալ Պէրժըրս գիտնայ լաւ թէ պիտի խորտակենք զինք այն օրը երբ մի միայն ըմբոստ որդի մը պիտի տեսնենք ի նա։ Հնազանդութիւն կը պարտի մեզ և կը յուսանք թէ պիտի հպատակի։ Անշուշտ խոնարհութիւնը, ողորմասիրութիւնը մեծ առաքինութիւններ են և մենք միշտ փափաքած ենք պատուել զայնս ամենն տեղ, բայց այնքան չէ. երբէք որ այս առաքինութիւնները ըմբոստ սրտի մը ապաստանը ըլլան, որովհետև ոչինչ կ'արժեն անոնք եթէ հնազանդութիւնը համընթաց չէ անոնց, հնազանդութի՞ւնը, մեծ սրբոց ամենէ մեծ զարդարանքը։»

Ցաւուած, տակնուվրայ եղած Բիէռ մարիկ կ'ընէ զայն։ Այլ ևս ինքզինքը կը մոռնայ և ուրիշ բանի վրայ չի մտածեր այլ այն հէք ու մարդասէր անձին վրայ որ այս ամենազօր բայց անարդար բարկութեան առարկան կը դառնար։ Կը յուսահատի։ Եւ կը տեսնէ որ տկար, ծեր թռչունի նուրբ վզով այս հալումաշ ծերունիէն որ հանդարտօրէն իր օշարակը կը խմէր ումպ ումպ, այնպիսի ցասկոտ, այնպիսի ահարկու անձնաւորութիւն մը կ'ելլէ որ կը դողդղայ սարսափահար։ Ինչպէս կրցած էր խարուիլ երևոյթներէ, կարծել, ներս մտած ժամանակ թէ տարիքոտ, ուժասպառ սուրբ մարդ մը կայ միայն հոն, խաղաղասէր և ամեն բան շնորհելու հակամէտ։ Շունչ մ'անցած էր

հանդարտիկ արտին մէջէն, և դարձեալ կ'սկսէր իր մէջ կոիւը, դարձեալ կ'արթննային իր տարակոյսներ, դարձեալ կ'սկսէին տանջել զինք իր անձկութիւնները։ Ո՜հ, ինչպէ՞ս իր ակնկալութեան հակառակ կը գտնէր էակ մը, չէր ուզէր հաւատալ, չէր կարող երևակայել այնքան փառամոլութեամբ տոգորուած անձ մ'որ կամք մը միայն ունէր, իր հայրապետական աթոռը բաղմած օրէն, այս է՝ թագաւորել, թագաւորե՛լ ինչ որ ալ ըլլայ, թագաւորե՛լ ինչ որ ալ պատահի, թագաւորել իբր բացարձակ և ամենազօր տէր։

Փոքր մը կ'ընէ սակայն, անօգուտ փորձ մը, յուսահատի մը մը վերջին փորձը, ոչ այնքան ինքզինք արդարացնելու համար, որքան իր սիրեցեալ քարտեղար Պէրժրօն, և աղերսագին.

— Ո՜հ, ընորհ ըրէ՛ք, կը գոչէ, մոռի՛ ըրէ՛ք զիս, սուրբ հայր, մի զարնէ՛ք զիս, մի զարնէ՛ք ոչ մէկը, ո՜հ, ոչ մէկը։ Ոչ մի էակ, ոչ մի բան, ոչինչ որ կրնայ ցաւ զգալ աշխարհի վրայ։ Բարի եղիք, ո՜հ բարի եղի՛ք այն ամբողջ բարութեամբ զոր աշխարհի տանջանքը պէտք է ներշնչած ըլլայ ձեզ։

(Շարունակելի) Ց. Մ. ԷՄԱՑԵԱՆ

ՄԵՌԱ՛Ի

«Ու ինք գնդակը վարդ՝ ապրեցու աչքան՝
Ոբ-ան վարդ կ'ապրի — առաւ մը միայն։» (1)

Տիկին Մարի Հրանտ Մամուրեան մեռա՛ւ. մեռա՛ւ յեղակարծ այդ ծաղկահատակ, ուսեալ, բարեկիրթ կինը՝ որ զարդարուած էր սրտի ու մտքի գերազանց ծիրքերով և զոր սէր ու համակրանք կը պատէին ամենուստ. անէացա՛ւ, բարէ՛, այդ գեղեցիկ ու խոստմնալից կեանքը՝ զոհ դաժան հիւանդութեան մ'որ իր քանդիչ աւերիչ դործը քանի մ'օրուան մէջ

---

(1) Զարմանալի՜ դիպակցութիւն։ Զնաշխարհիկ հոգւոյ կսկծալի կորուստը՝ զոր կ'ողբանք դառնօրեն, ահիշ միևնոյն կերպով ներշնչեր է երեք տարիներ զոդինիր՝ յիշեցնելով անոնց Մաքերպի անմահ տողերը . . . : Ծ. Խ.

կատարեց հոգեբոյժ այդ քնքոյշ ու շնաշխարհիկ արարածի վրայ։ Ոչ բժշկական ճարտար դարմաններ, ոչ ընտանեկան բոլորանուէր խնամքներ կրցան կորզել գինք մահուան ձեռքէն՝ որու անողորմ մանդաղը այնքան վաղաժամ կը հնձէր այդ սիրուն ու անմեղանուշակ ծաղիկը՝ որու վրայ այնքան զմայլանք ու գուրգուրանք կ'ահիսուէին։ Յուզիչ ամենէ անդութ հարուածներէ մին էր սա՝ զոր սև ու անողոք ճակատագիր մը տուած բլայ երբէք իր անհասկանալի՝ այսինքն անիրաւ քմայից մէջ . . . ։

Եւ ճիշդ տարի մ'էր որ Տիկին Մարի Հրանտ Մամուրեանի կուսական սուրբ սէրը՝ երկար տարիներ վառ ու անմեռ իր նուրբ զգաստ որսի մէջ՝ կը պատկուէր վերջապէս, ու ինք ամուսնութեան երջանիկ կապով կը միանար տարաբաղդ Հրանտի հետ՝ որու՝ մինչև վերջին շունչը՝ նուիրած էր իր մաքուր սիրան ու հոգին, և որ, աւաղ, այնքան սուղ միջոցի մէջ գինք կորուսելու սև բաղդին տակնու

է եղեր։ Այո, տարի մ'էր ճշդիւ ու կէտ առ կէտ որ երջանիկ կարծուած այդ միութիւնը կը կատարուէր վերջապէս։ այսինքն 1895 Յունիս 4 գիշերուան ժամը 1 ին ամուսնացած Տիկին Մարի՝ 1896 Յունիս 4 գիշերուան ժամը 1 ին — ի՜նչ տարօրինակ դիպակցութիւն — յեռին շունչը կ'աւանդէր ամուսնոյն գրկայ մէջ՝ որմէ կը բաժնուէր յաւիտենապէս և որու այրեցուցեր հաւատարիմ սիրտը կը մատնէր յաւիտենական սուգի։ Թնութիւնը կարծես այս անարիւ հոգիի՝ այս ընտրեալ արարածի վրայ կը խաղար խորհրդաւոր խաղ մը՝ որ չարաշուք, դժպհի ու ամենի կատակի մ'ամեն հանգամանքները կը կրէր ապաքէն . . . ։

Արժանավայել շուքով կատարուեցաւ յուղարկաւորութիւնը՝ որու խառն բազմութիւն մը կը հետևէր զդածեալ ու հիշկնեալ մինչև յարտասուս։ Ամեն կողմէ խրկուած ծաղիկներ ու պատկներ՝ որք տխրալի, անուշ ու քնքոյշ կեանքի մը խորհրդանշանը կը պատկերէին, ծածկած էին համակ դագաղը՝ որու քով իր սրտին հատորը՝ իր հաւատարիմ ամուսինը՝ այնքան տարաժամ այրեցած, անպատուում վշտի մ'անձնատուր՝ կը հեծկլտար ու կուլար՝ մինչ քահանայից դասը մեռելական տխուր արարողութիւնը կը կատարէր տան մէջ։ Դժբաղդ երիտասարդը նոյն կէտին զեղուն դառնութեամբ աչքին առջև կը բերէր անշուշտ նորապսակ հոգեսը մի կենդանութեամբ, զուարթ ալ էր ու ծաղիկներով պեղեցկացած զարդա-

բուն՝ և որ հիմայ զդայապէրկ ու անշէջեցեալ ախրնապէս և առ յաւէտ ամփոփուած կը գանուէր այդ գամուած չարաչուք դադարի մէջ։ Մինչ ջանքամիջոց զարհուրելի հակապատկեր՝ որ այս աշխարհի ունայն յաղդողդութիւնն արդէն թէ ըմբոստ հասարակ հարուածներով կը յիշեցնէր ցաւի բաժակը մինչ անուր քամող անհանգիստ Հրանտին։ Արդարև, սրտաճմլիկ բան մ՚էր տեսնել այդ ծաղկահասակ ամոլը այդքան կարճ միջոցի մէջ անագին աղէտով մ՚այդքան ցաւալի կերպիւ բաժնուած իրարմէ։ Մէկը — շնորհալի հարս մը — հուսկ յետին բարեր աւուած կեանքի, լուսոյ ու յուսոյ, անկենդան տարածուած չորս փայտի մէջ, միւսը — նորահասակ փեսայ — գրեթէ անկացած՝ հոն՝ այդ տխրաշուք կապմածի մէջ կը տեսնէ աշխարհէ արդէն իսկ հրաժարեալ իր պաշտելի կնոջ, իր զոզոր սիրոյն առարկան՝ որու ընդհուպ պիտի հետեւի մինչև դերեզման . . . ։

Մինչև դերեզմա՞ն։ Քանի՞ քանի՞ զիշերներ սիրականին ընտարին քով անքուն հսկած այդ երիտասարդը, ուժասպիտ, ջլատած ու նկուն, որ դեղեուն քայլերով հոգիս կրցաւ ինքզինք քաշկռտել մինչև տաճար՝ ուր անգամ անգամ նուաղեցաւ, պիտի կրնա՞ր իր սիրեցեալին հեւանելու մինչև իր յետին կայանը՝ սև հողի յանձնելու համար զան։ Խեղճը իր ֆիզիքական ոյժերէ մատնուած՝ այդ վշտալի մխիթարութիւնէն իսկ համակերպեցաւ գրկուիլ՝ երկար ու յամառ դիմադրութենէ մը ետք հուսկ ուրեմն տեղի տալով բարեկամական յորդորներու թախանձանաց։

Իսկ իր տաբաբաղդ հա՞յրը՝ որ կը հեծկլտար նկուն, թաքծագին ու անմխիթար։ Իսկ ալեզարդ Մամուրեանը՝ որոնց հարան ու դաւակն եղած էր հանգուցեալ Մարի՝ Եկմիրի վարժարանաց վարիչի տեսչին ու վարժապետին սիրական առաջիրուժիր սանուհին — արդէն իր դաւակը — ըլլալէ ետք, երբ միւնոյն ժամանակ Աբ. Մամլչ խմբագրապետին ամենքան քաջողակ աշխատակիցը կը հանդիսանար՝ Իզմ. ծանոթ ծածկանունամբ։ Հապա վշտահար Տիկին Մ. Մամուրեանը — կատարեալ մայր մը ծաղկահասակ Մարիին՝ որ մայր չէր ճանչցած իր մատաղ հասակէն՝ քայց միայն անձնուէր ու գորովալի հօրաքոյր մը՝ Օր. Թագուհի Տամկանեան, որ մեր մը հաւատար սիրած էր զինք — ու ինչպէս հնարին էր չսիրել այդ թարմ, սիրալի ու գերազանցապէս համակրելի արարածը՝ որ սէր կը ներշնչէր ամենուրեք . . . ։

Եւ Տիկին Մարի Հրանտ Մամուրեան իր առած ուսմունքով ու կրթութեամբ և իր անհատական ընտիր բարեմասնութեամբք սահմանուած էր օգտակար ու պատուաւոր գործ մը կատարել Իզմիրի Հայ Հանրական շրջանակի մէջ։ Այդ էն այդքան նորահասակ, անդամ ու միանգամայն ատենադպիր էր Հոխիսիմեանց վարժարանի Խնամակալուհի Տիկնանց՝ այդ դպրոցի յատուկ ամեն ձիրքերն ունենալով։ Իզմիրի Վարժարանաց Տեսչութիւնը գովելի անօրէնութիւն մ'ըրած էր աշակերտաց ու աշակերտուհեաց յատուկ պատգամաւորութիւն մը խրկելով յուզարկաւորութեան տխուր հանդէսին։ Արտաշարժ բան մ'էր տեսնել զանոնք տրտմահար դէմքով ու մէյմէկ պսակ ի ձեռին՝ բոլորուած բարեյիշատակ հանգուցելոյն դագաղին շուրջը։ Որքան պատիւ մ'էր այս վաղեմութիւն խնամակալուհւոյն՝ նոյնքան և արժանաւոր յարգանք մը Իզմիրի Հայ վարժարանաց հին բաղմավաստակ Տեսչին և Աղջային հին աշխատաւորին։ Սանուհիներէ մին — ամէնքը սպիտակազգեստ — Օր. Մարի Միրզայեան զգածեալ ձեւերով կարդաց դամբանական մը հանգուցելոյն գովելի բարեմասնութիւնները ի վեր հանող։

Տիկին Մարի Հրանտ Մամուրեանի վաղահաս մահը՝ զոլ ներկայ թուով անգամ մ'ևս կ'ողբայ Սբ. Մամուլ, զգալի կորուստ մ'է ասպաքէն ինչպէս հայ ընկերական շրջանակի՝ նոյնպէս և Հայ հանրական կեանքի վերաբերութեամբ՝ ուր հանգուցեալը արդէն սկսած էր փայլիլ պայծառապէս։ Իսկ ընտանեկան շրջանակի մէջ իր տարաժամ անհետացումը անդարմանալի վիշտ մը կը թողու անմեռ յիշատակի մը հետ՝ զոր ժամանակը երբէք չպիտի կրնայ ջնջել դիրք տիրող սրտերու մէջ՝ որք ստուար լեզէոն մը կը կազմեն։

Մ. Ն.

Ամեն. Տ. Մելքիսեդեկ Մուրատեան Սրբազանի մի վշտակցական ընտիր գրութիւնն յաջորդ թուով՝ ըստ խնդրոյ ազգակիր բարեկամներու։

ՍԵՒ ԳԻՇԵՐԸ

Մութ էր իմ շուրջ. երկիւղ, երկիր, դաշտ ու լեռ.
Ոչ մի ձշոյլ կենաց, ոչ ձայն, ոչ շշուկ.
Տաք, ինդձուցիչ օդ մը միայն որ ձգէր
Զանձարոյքի տակ սիրտս ու հոգիս տրտմաւուզ.

Վեր նայեցայ, աստղերու տեղ սեւ կիսեր
Փոխան շուտոյ կը թափէին սուզ ու ստուեր.
Վար նայեցայ, ծառերու տեղ չոկ պաստեր,
Ոյց վրայեն կ'իջնէին սեւ սեւ օձեր.

Առուակին ոսկի տարի քայլերս իմ դանդաղ,
Պաղ ջուրի տեղ տաք տաք արցունք կ'հոսեր.
Քարի վրայ դրի գլուխս, այլ աւա՜ղ,
Ի՜նչ կը տեսնեմ, ցցուած երկայն. սեւ փուշեր.

Տենդոտ, յուզեալ տուի ձախասս հրակիզ
Այն տաք հողին որ կը շնչեր հեւն ի հեւ,
Մի պաղ սառոյի գրկեց հոգիս մահուան պես,
Հրծծիւն մը կար այդ շնչին մէջ յարատեւ:

Եւ ահա հո՜ն, այն սեւ երկայն պաստին տակ,
Փոս մի տեսայ, բացուած խորո՜ւնկ ու դեռ նոր.
Ու մինչ մոլար կը դիտի շարունակ,
Սրձանուցած մնացի յաւիտ, զլխիկոր.

Մահուան միւաղն էր հոն կանգուն ու շիտակ,
Հոն՝ սիոնոյ սոսկում, խաւար ու սարսուռ.
Եւ իր ափին մէջ բռնելով մի հրեշտակ,
Ձիչ մ'արձակեց քերկրութեան, ո՜հ, մինչ մը սուր . . .

Դողա՜ց երկիւղ, դողա՜ց երկիր, դաշտ ու լեռ,
Ա՛լ չունցին կենաց ձայներն ու շշուկ.
Տաք, ինդձուցիչ օդ մը միայն կը մնայր
Եռ՝ր ցաւոց մէջ թիւր հոգիներ տրտմաւուզ

ԼՈՒՍԻ ՏԻԼՊԻԿԻԱՆ

ՁԱՅՆ

ԵՒ ՁԱՅՆՈՎ ԶԲԱՂՈՂ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՆԵՐ

Գէննաթի կը պատմէ թէ Մ... կոմուհին ։ Ն երգած. ատեն ամեն մէկ անգամին բերանը ձախակողմ կը ծռէր։ Այս բարձր ձայնը արտասանած միջոցին անգամ մը բերանը քննելով՝ դիւաձայնի բարձր ձայներուն մէջ ամեն անդամ լեզուին կազմած կաւառաձևը (espèce de rigole) տեսաւ որ փոխանակ լեզուին մէջ տեղը գտնուելու դէպի ետեր մէկ կողմը տեղաւորուած կը գտնուէր։

Միևնոյն դիմագիծը Էրբ-էրի դեռատի դերասանուհիի մը տալը խելացութիւն է։ Դէմքի անդամալուծութեան ենթակայ պիտի նկատուի։

Այս պակասութիւնները դարմանելը միշտ կարելի չէ։ Արդարև, յայտնի է որ ֆրանսացին գերմանական ևը չը կրնայ արտասանել, և գերմանացին ալ մը լեզուին ռնգային ձայները։ Գերմանացիները և ֆրանսացիները անգլիական արտասանութիւնը խիստ դժուարութեամբ իւրացնել կը սորվին, մինչդեռ այս զանազան ազգերուն մէջ ձայնական գործարանները միևնոյն են։

Ուրեմն, մանուկներուն կանուխէն հաստատուն դրութեամբ մը երգի և լեզուի դասեր տալը անհրաժեշտ է։

Այս կերպով հռչակաւոր երգիչներուն նուազ ճարտարիկ դառնալ նին պիտի տեսնուի, և շատ արուեստագէտներու յաճախ այնչափ քիչ պայծառ և այնչափ քիչ ուղիղ արտասանութիւնն երբէք չը պիտի գտնուի։ Վասն զի այս անձերուն ականները սեղմած յողաւորելը կամ բերաններն չափէ դուրս բացած երգել տեսնելը արդարև հազուագիպ չէ։

Այս սկզբունքներուն օգտակարութիւնը Գէննաթի այնչափ լաւ ճանչցած էր որ եօթը տարեկանէն վեր աշակերտները մէջ յատակի դասեր տուներ կը բռնադատէր, բերաններն բանալու և ձայնատուներուն այսինչ կամ այնինչ ձայնին հարկաւոր ձևը տալ կ'ստիպէր. յետոյ միայն քիչ քիչ ձայները կ'երգէին։ Այս կերպով իրենց մկանուններուն տեր ըլլալու կը հասնին։

Փորձառութիւնը այս ճարտար վարպետին ցուցուցած է որ այս նախնական վարժութիւններուն հետևող երգիչները դժուարութիւններն շատ յաղթած էին։

Աշխատութեան տեսութիւնը։ — Ձայնական աշխատութիւնը մինչև յոգնութիւն դալու չափ տևելու չէ. ուրեմն հետևելիք օրէնքը ո՞րն է։ Ձայնական վարժութիւններու սահման մը որոշել արդարև կարելի չէ, որովհետև կազմութիւնը և գործարանին դիմացկունութիւնը անձերու համեմատ կը տարբերին։ Անձինք կան որ առանց յոգնութիւն զգալու ամբողջ ժամերով կրնան խօսիլ կամ երգել, մինչդեռ ուրիշներու համար բոլորովին կը տարբերի։

* Տես Ա. Մ-ոյ, թիւ 12։

Կարևոր է նաև երգիչները խրատել որ իրենց վարժութեան ընթացքին մէջ իրենց ձայնին բնական սահմանները անցնելու չաշխատին, պարիթոն մը թենոր դառնալու չը ձգտի և փոխադարձաբար։

Նոյնպէս աշակերտները գլխի կամ լանջի ձայները շատ հեռուները մղել չը ձգտին. որովհետև առաջին պարագայի մէջ ձայներին կենայ կըտրիլ և երկրորդին մէջ միջնաձայներին կ'աւրեն որ յոգնած և դոց կը մնայ։

Երգի վարժութեան ե՞րբ սկսելու է։ — Եօթը կամ ութը տարեկանէն երաժշտութեան մեքենական ուսման կարելի է սկսիլ, բայց տղան պէտք է որ այս վայրկեանէն սորի ձայնարձակելու համար բերանին ամենէն յարմարագոյն ձևը տալ, ոչ միայն ամբողջ եօթնաձայները մեղմով և ծանր երգել, ինչպէս որ շատ յաճախ կ'ընեն, այլ և ձայնանիշերը առանց ծիգի հնչել։ Այս կերպով ձայնին այն դիւրաշարժութիւնը կրնանք տալ որ երգելու ուսման ուշ սկսող անձերուն կը պակսի։

Ձայնափոխութեան շրջանին ձայնական վարժութիւններ ընելի զգուշանալու է, տպա թէ ոչ ձայնի խանգարում կը պատահի։ Այս ժամանակամիջոցին արտասանութեան սխալները ուղղելու է։ Մանչերը իրենց երգի դասերուն սկսելու չեն մինչև որ ժամանակ առ ժամանակ կրկնուած փորձերով իրենց ձայնին կատարելապէս կազմակերպուած ըլլալը չատուգեն։ Դեռատի աղջիկներն ալ հաւասարապէս պէտք է պադրին մինչև որ կատարեալ կին ըլլան և նոյնպէս ամեն ամիս պէտք է որ մի քանի օր երգելը դադրեցնեն։

Ձայնափոխութիւնը Տօնծելլին պաշարած միջոցին, իր ընկերակիցներէն մին վարպետին մեծ եղբայրը Տօնիծեթթի, միևնոյն վիճակի մէջ գտնուելով երգի վարժութիւններու պարապիլը շարունակեց և շուտով ձայնը կորսնցուց։ Տօնծելլի՝ որ իր վարպետին խրատներուն վրայ ձայնափոխութեան ամբողջ շրջանի միջոցին երգելը դադրեցուցած էր, ընդհակառակը սքանչելի ձայն մը ստացաւ։

Ձայնափոխութեան միջոցին եթէ երգելը ընդմիջելու զգուշութիւն ըլլայ յետոյ մի քանի սուր ձայնանիշեր շահիլ կարելի կ'ըլլայ, բայց ասոր համար պէտք է ստուգանարար և առանց ծիգի վարժութիւն ընել։ Պէնեմանթի իր առաջին մանկութենէն իր սոբրանո ձայնին շատ տարածուն ըլլալը կը յիշէ։ Դէպի 14 տարիքին մէջ ձայնափոխութիւնը սկսելով վարպետը իր դասերը կը դադրեցնէ։ Երկար ամիսներու միջոցին վարպետը Պէնեմանթի ձայնին ամբողջ օքթավ մը ցածնալը և միևնոյն ատեն իր նախնական ձայնէն մի քանի ձայներ պակսիլը կը նշմարէ։ Այն ատեն զայն խրատեց ձայները հաստատուն կարգ կանոնի վրայ և առանց մեծ ծիգեր թափելու երգել, գուշակելով որ այս միևնոյն ձայները քիչ յետոյ իրեն պիտի հայթայթեին երկրորդ ձայնաստիճան մը որուն ձայները տակաւ առ տակաւ առաջին ձայներուն պիտի կապակցէին, և այս բանն ապագային համար մեծ յաջողութիւններ պիտի պարգևէր։ Այս երաժշտական կրթութեան շնորհիւ է որ Պէնեմանթի երեք օքթավ ձայնի տարածութիւն մը ունեցաւ։

Սնուցիչ։ — Ձայնի զանազան վարժութեանց տևողութեան միջոցին շնչառութիւնը ուշի կ'արագանայ և արտաքսակալ ածխային թթուին չա-

փը չնչառական կոչուած սնունդներու կիզման պատճառաւ կը շատնայ։ Ուրեմն, արուեստագէտը այս կորուստը բաւականացուցիչ սնունդով մը պարտի դարմանել։ Կաթնարան և արիւնոտ միսերը, ժանպանը, ուժով մնաջուրը, մնահիւթը, նշոյաւորը նիւթը, բրինձը, շաքարը և աղը նախապատուելու է։ ոգելից ըմպելիներու չափաւորութիւնը, սուրճը և թէյը մերժելու է, որ արեան շրջանը կը սաստկացնեն և շնչառութեան տրամադրութիւնը կ'աւելցնեն, հետևաբար ձայնը կարճ և շնչասպառ կ'ընեն։

Ցատակ, ղով, քաշտրտհամ և դորձարանաւոր մարմիններէ զերծ ջուր մը առողջապահական սքանչելի ըմպելի մըն է։ բայց մեծ չափով խմելէ զգուշանալու է, վասն զի այն ատեն անմարսողութիւն կը պատճառէ։ Արուեստագէտը շատ պաղ կամ առատախառն ջուր խմելու չէ, մանաւանդ երբ մարմինը քրտնած ըլլայ, որովհետև շնչառական գործարաններու նշդիսկ մահաբերիչ վնասներ կրնայ պատճառել։ Տաք ջուրն ալ քրտինք կը բերէ։

Բուսական չափով ջուրի մէջ խառնուած թթուաշ շրուպները (լիմոնջուր, նարնջաջուր, հապարջաջուր և այլն), բերնի և խուչափողի շճաթաղանթները կը զովացնեն։

Շնչառական և զօրացուցիչ սնունդներու որոշեալ չափը հիւսուածներուն սպառումին համեմատ ըլլալու է, անրաւական ըլլալու չէ, որովհետև շնչառութիւնը կը դանդաղի և այժերուն պակասելովը ձայնը կը տկարանայ։

Որոշեալ ժամերու մէջ արուեստագէտի մը ճաշելը դժուարին է։ իր առաջնութիւնները փոխել սխալուած է, որովհետև մարսողութեան միջոցին ոչ կրնայ խօսիլ և ոչ ալ երգել։ Արդարև այս միջոցին սնունդով լեցուած ստամոքսը ստոծանին դէմ տարածուելով անոր շարժումները կը դժուարացնէ։

Այսու հանդերձ մի քանի արուեստագէտներ կան որ այս կանոնէն կը զարտուղին։ Ինչպէս կը պատմուի թէ Պալիպրան դերասանուհին բեմ ելլելէ էկս ժամ առաջ իր խուցին մէջ կը ճաշեր։ Տէզրէմոնի կամ Արասի տարազ հագած՝ ոչխարի կողիկներ կուտէր, անէպլոն ... և էկս շիշ Սոդերնեան գինի կը խմեր։ Ճաշէն վերջը անուանի քաջ երգչուհին սիկառ մը կը ծխեր զոր բեմ ելլել ղեկուցուած միջոցին կը նետեր։

Արդ, հրապարակախօսները և երգիչները խօսելէ կամ երգելէ քանի մը ժամ առաջ ճաշելու են, պէտք է յիշեն թէ իւղոտ նիւթերը (ճարպ, կարագ, իւղ, և այլն) ուրիշներէ աւելի իրենց սնունդին մէջ ընդարձակագոյն տեղ մը բռնելու են։

Արուեստագէտը երգելէն վերջը կրնայ ճաշել, բայց մի քանի բոպէ հանգստանալը խոհեմութիւն է, որպէս զի ձայնական գործարանին մէջ երգելէ պատճառուած արուեստական արիւնախժումը բոլորովին անհետի։

(Շարունակելի) ՅՈՒՍ. ՓԱՇԱՆԱՆ

ՏԱՐՎԻՆԵԱՆ ԴՐՈՒԹԻՒՆ*

Բ

ԲՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

Եթէ մարդ ուզէ որոշ յատկութեամբ ցեղ մ'առաջ բերել, կ'ընարէ անասուններէն այնպիսիներն որ փափաքելի յատկութիւնն առատօրէն մ'ունին և զանոնք կ զուգաւորէ։ Ժառանգականութեան օրինաց՝ այդ յատկութիւնը սերունդին կ'անցնի և սովորաբար հետզհետէ կ'զարգանայ։ Այս է Մարդու ընտրութիւն, մեթոդաւոր, գիտակից ընտրութիւն։

Քանի որ անհատներն կ'պարտաւորին մաքառիլ՝ թէ իրարու մէջ ուտելեաց համար, թէ կլիմայի և արտաքին բնութեան բոլոր պատահարներու դէմ, մէկ իսկոյն՝ քանի որ կենսական շահագրգռութիւնը հանդիպին օրէնք մ'է, առ հարկի ամենք կ'կորսուին պայքարին մէջ, այլք կ'յաղթանակեն կատելու պայմաններու յարմար լաւագոյն յատկութեանց շնորհիւ։ Ահա այս յարաբերական գերազանցութեամբ է որ այս վերջինները կ'ապրին։ Բնութիւնն այս առաւելութիւնը տալով անոնց կենաց պայքարին մէջ՝ իրրև յաղթական անհմանած կ'երևի։ Այս է Բնական ընտրութիւն, կենսական մրցման հետևութիւնը։

1. Մարդու ընտրութիւն. — Բնութիւնն այլազանութիւններ ունի. մարդս անոնց որոշ ուղղութիւն մը կ'տայ օգտակարութեան նպատակաւ։ Սպանիայէն կ'գային 18րդ. դարուն ամեն մաքուր բուրդերը։ Ֆրանսական կառավարութիւնն այդ հարկէն ազատելու մտաք՝ Տօպանդօնի յանձնարարեց որ Ֆրանսական ցեղերով յառաջ բերէ Սպանիոյ մերինոսին չափ ընտիր բուրդեր։ Տօպանդօն Ռուսիոյնի խոյերն առաւ և Պուրկոնյի մաքիներուն հետ միացուց։ Սպանիական բուրդն չորս ընտիր յատկութեամբ կ'որոշուի, այս է՝ երկայնութիւն, առատութիւն, նրբութիւն, մաքրութիւն։ Ռուսիոյնի խոյերն վեց բթամատ երկայն բուրդ ունէին, Պուրկոնյի մաքիներն երեք բթամատ։ Առաջին սերունդն՝ Տօպանդօն հինգ բթամատ երկայնութեամբ բուրդ ստացաւ։ Հետզհետէ այս կենդանիներէն երկայն բուրդ ունեցողներն ընտրելով, Տօպանդօն եօթն ութ սերնդեան մէջ քան

*Տես՝ Ա. Մասու, թիւ 12։

երկու բթամատ երկայնութեամբ բուրդ ստացեր էր։ Առաջին խոյին գեղմն երկու լիպրէ կ'կշռէր, ուրիշերորդինը տասն երկու։ Առաջին զուգաւորութիւնէ ստացեր էր տրդէն փափաքելի նըբութիւնն ու մաքրութիւնը։

Անասնաբոյծներու ձեռքին տակ՝ կենդանիի մը կազմն իրրև կերպընկալ նիւթ մ'է զոր մարդ ըստ հաճոյս կրնայ կերպաւորել։ Արդէն յայտնի է որքան բազմաթիւ են ազաւնիներու տեսակներն և ինչ զլալի տարբերութեամբ կ'զանազանին։ Երեք տարուան մէջ, կ'ըսէր Սէր Ճոն Սիպրայդ, ուզած փեսաներս կրնամ արտադրել։ բայց վեց տարի պէտք է զլուխն ու կաուցը ստանալու համար։

2. Բնութեան ընդդիմութիւնը. — Ինչ որ մարդս մեթոտաւոր և դիտակից կերպով կ'կատարէ, բնութիւնը ֆիզիքական տչխարհը կատարեալ օրինաց ազդեցութեամբը տակաւ կ'կատարէ։ Բնութեամբ՝ պէտք է իմանալ բնական օրինաց համարդ ազդեցութիւնն և բազմազան արդիւնքն. իսկ տիեզերք ըսելով՝ հարկ է իմանալ՝ այժմ մեզի ծանօթ իրողութիւններու կարևոր չարքը։

Ենթադրենք տեսակ մը դայլեր որ այլազան կենդանիներով դ'կերակրին, մէկ քանին խորամանկութեամբ, մէկ քանին բուռն ուժով և մէկ քանին արագաշարժութեամբ բռնելով։ Ենթադրենք որ՝ սովի դամ ուրիշ պատճառաւ մը, նոյն երկրին մէջ միայն էջայծեամն մնացած լինի։ Հետևապէս դայլերու մէջ սովի պիտի դիմանան անոնք որ թէ ուժեղ են և թէ արագաշարժ։ Ասկից պիտի յառաջ գան՝ դայլեր որոց դիրաշարժութիւնն հետզհետէ պիտի աճի ընտրական կազմաւորութեամբ։ Ասկից յառաջ պիտի գայ նաև և զուգահեռակի երկին յաջորդական նուազումը։ Եթէ՝ ընդ հակառակն՝ որսն բարձր հատակով երկ լիներ կենսական մրցման մէջ զբեղ և կարճ դայլերը յաղթութիւնը պիտի տանէին։ Այս ենթադրութիւնը վաղուց հաստատուած է։ Միացեալ Նահանգաց Բէղաբիլ լեռներուն մէջ երկու այլազան դայլեր կան։ Մին բարձր մարմնով՝ մեր քերծէներուն նման, վայրի կենդանիները կ'հալածէ, միւսն՝ աւելի մեծդի՝ ստէպ կ'յարձակի հօտերու վրայ։

3. Մարդկային և բնական ընդդիմութեան փոխբերութիւն. — ա) Մարդ. — Մի միայն իր օգուտը նկատելով կ'կատարէ մարդ ընտրական գործողութիւնը զանազան առարկաներու և արարածներու մէջ, հետևապէս ոչատ ասպարէզ չատար այդ գործողութեան։ Օրինակի համար. տարբերուն բնիկներ մի և նոյն

երկրին մէջ կ'պահէ, մի և նոյն անուղղակի կ'կերպակերպ ազատութիւն որ կարճ ու երկայն կատուցներ ունին. մի և նոյն կիսմայլ կ'ենթարկէ թէ խիստ և թէ ցանցառ բուրդ ունեցող ոչխարներու չթողուր որ ուժեղ արուներ իրարու դէմ մրցին էգերն իրացնելու համար. մէկ խօսքով՝ մարդու ընարութիւնն իր օգտին համար է, ոչ մարդու համար է։

բ) Բնութիւն. — Տարբեր և աւելի աղատ կ'գործէ բնութիւնն իր ընարութեան մէջ. թոյլ կ'տայ որ ամէն նորակազմ գործարան ըստ հաճոյս ընթանայ, և այլափոխուած անհատն ամենէ նպաստաւոր պայմաններու մէջ կ'դնէ, այնպէս որ ամենէ աննշան տարբերութիւնն իր հաւատարակիր ոյժը կ'գտնէ ու կ'յարատևէ։ Ընդ հակառակն՝ մարդուս կեանքն այնքան կարճ է որ իր արտադրած արդիւնքը մէջտ անկատար պիտի մնան բազմատարմէ այն արդեանց զոր բնութիւնը կարող է կատարելագործել երկրաբանական ամրողջ շրջաններու ընթացքին մէջ։ Ամեն օր, ամեն ժամ և համայն աշխարհի մէջ բնական ընտրութիւնը կ'քննէ ամեն, մինչև լոկ աննշմարելի փոփոխում, որպէս զի վատը մերժէ և լաւը պահպանէ և աւելցնէ։ Այսպէս բնութիւնը կ'աշխատի անդադարպէս և լռելեայն, ամեն տեղ, միշտ և յարմար առթիւ, որպէս զի մէն մի էակ կատարելագործէ՝ իր գոյութեան պայմանները դիւրացնելով։ Անոնց անելի են մեզ այն յայտնի ու յառաջադիմ այլափոխութիւնները մինչև որ ժամանակն իր դրոշմն անոնց վրայ չտպաւորէ, և այդ վիճակին մէջ անդամ՝ մեր տեսութիւններն՝ երկրաբանական անուանման շրջաններու պատճառաւ՝ այնքան թերի են որ լոկ բան մը տեսնենք. այս է՝ թէ կենդանական ձևերը շատ տարբեր են այսօր քան ինչ որ երբեմն էին։

(Շարունակելի) Ա.

ՀԱՅԵՐԷՆ ՀԻՆ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ա.

Տոհմային գրական որ և է հնութիւն մը՝ եթէ մենաւոր քննութի և հրատարակութի, անտարակոյս տան մը մատաղութեան մատնուած նիւթեր, և մանաւանդ բազում կարևոր հմտարանութիւններ երևան կ'ելնեն, որով ո՛չ նուազ յաւելումներ կը

բարդուին մեր ազգատիպ պատմութեան վրայ, յաւելումներ որ ի հարկէ կ'ունենան իրենց այլ և այլ օգուտներն։

Գրական հնութեանց կարգէն կրնան համարուիլ նաև մեր Հայերէն հին տպագրութիւններն, որոց վրայ որուած ու տարուելիք ծանօթութիւններէն հայերէն տպագրութեան պատմութիւն կ'արդիւնաւորի, և կանոնաւորապէս կը կարդացուի, որովհետև նոյն պատմութեան վրայ, մինչև այսօր արուած տեղեկութիւն և ծանօթութիւններն, այնպէս կը թուի ինձ թէ, ամբողջացած չեն և պակաս են։

Բայց ցաւալի է, որ մեր ազգին մէջ այսպիսի իրեր, իրր անկարևոր և անարժէք, շատ տեղեր մէկ կողմ կը նետուին փոշիներու տակ ցեցերու կեր լինելու համար, ինչպէս եղած են մեր երանելի նախնեաց, սուրբ և անխոնջ մատանց արդիւնք շատ նուիրական ձեռագիր մատեանք, մինչդեռ ուրիշ ազգերու քով այսպէս չէ, այնպիսիք մեծ յարգ ունին, կը փնտռուին, կը քննուին և ադոնց վրայ ծանօթութիւններ կը հրատարակուին, մանաւորապէս պատմութիւնը ամեն կերպիւ լուսաւորելու և ճոխացնելու համար։

Բաւական տարիներէ ի վեր մենք անհատապէս հետաքրքիր եղած ենք հայերէն հին տպագրութիւններ հաւաքել և ի մի ժողովել, ղետեղելով դանոնք Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց Մատենադարանին մէջ, տուտին կարևորութիւնը տալով Հայ տպագրութեան սկզբնաւորութենէն մինչև 1800 թուական տպագրուածներուն։ Կրնանք ըսել թէ այսօր գրեթէ կիսովին յաջողած ենք, և եթէ մեր կամքէն անկախ պատճառներ յառաջ չգան, պիտի աշխատինք որչափ կարելի է, ամբողջացնել և հետևաբար ցանկ մը պատրաստել, և արդէն ալ սկսած ենք, տպագրութեանց թուականի կարգաւ, մանաւոր տեղեկութեամբ և ծանօթութեամբ և իրենց ամբողջ կարևոր յիշատակարաններով։

Ասկէ առաջ, Վենետիկոյ Մխիթարեան միաբանութեան անդամներէն Հ. Գար. Զարբհանէլեան, 1885 ին «Հայկ. Մատենագրութիւն» անուն գիրքն հրատարակեց, գիրք մը՝ որ համբերատար հոգւոյ և խղճամիտ աշխատասիրութեան արդիւնք է, և իր մէջ կը պարունակէ, հայերէն տպագրութեան սկզբնաւորութենէն մինչև նոյն թուական տպագրութիւններն, աշխարհական կարգաւ և հանդերձ այլ և այլ տեղեկութեամբ ու յիշատակարաններով, և մեծ ընդունելութիւն գտաւ բոլոր գիտ-

նական աչխարհին մէջ։ Թէև գործին կարևորութիւնն անուրանալի, և մեր յարգանքն մեծ՝ առ Տարգ. Հեղինակն, բայց ունի նաև իր պակաս կողմերն ալ, բնականաբար յա՛չ կամս յառաջ եկած, որովհետև այժմ կը տեսնենք, թէ բաւականաչափ հին տպագրութիւններ անծանօթ մնացած են, զորս չէ կրցած իրենց կարգին զետեղել։

Հետևաբար՝ անկարևոր չը թուեցաւ մեզ. այժմէն իսկ տեղեկութիւններ տալ, Պատուական «Աբ. Մարգ» միջոցաւ, այն տպագրութեանց վրայ, որ յիշեալ գործին մէջ իրենց կարգին գրուած չեն։ Այս անգամ առաջինն սիրոի ծանօթացնենք «Ժողովածու» անուն գիրքն, որ վեց անգամ տպագրուած է միայն Կ. Պոլսոյ մէջ։ Առաջին տպագրութիւնը եղած է 1710 թուականին, երկրորդը՝ 1715 ին, երրորդը՝ 1718 ին, չորրորդը՝ 1730 ին, հինգերորդը՝ 1747 ին և վեցերորդը՝ 1790 ին։ Արդէն 1710, 1730, և 1747 թուականներու տպագրութեանց վրայ, պէտք եղած տեղեկութիւններն տրուած են «Հայկ. Մատենագրութեան» մէջ (Տե՛ս անդ երր. 240), մենք հոս առաջ սիրոի բերենք միայն 1715, 1718 և 1795ին տպագրուածներն. որք են՝

ԺՈՂՈՎԱԾՈՒ (Տպ. 1715)

Գրչին ճակատը. — «Սկիզբն գրոցս որ կոչի Ժողովածու։ Գիրքըս այս ճառէ զպատմութենէ նախանշարցն սրբոց. Այլ և զՏեառնէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ որ է մեկնէ ըստ ասաջադրին իւրոյ զեղեցիկ խմացուածովք շարադրեցեալ. Այլ և քարոզք պիտանացուք ասացեալ սրբոց վարդապետաց ի յօգուտ վերծանողաց։ Ի Հայրապետութեան Տեառն Աղեկսանդրի Ջուղայեցւոյ Կաթողիկոսի ամենից Հայոց։ Եւ թուականութեան Հայոց ՌՃԿԲ Յունվարի ամսոյն Ի. Եւ ի թվին Քրիստի 1715. ի Ըստամբոլ Քաղաքի։

Յիշատակարանը. — «Փառք . . . Արդ՝ աւարտեցաւ ժողովարանս թվին Քրիստոսի ՌՉԺԴ։ Եւ Հայոց. ՌՃԿԲ. Յունվարի Ի։ Ի Մայրաքաղաքն Ըստամբոլ. ի թաղն, Պէկ Օղլի, և յիշեցէք Հանդամիջեցի Աստուածատուրի որդի Մահտէսի Ղարախան, Աքուլեցի Գրիգորի որդի Փանոսը, Աքուլեցի Խանդմելի որդի Ավաքս, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Այ. մերոյ ամէն։»

Ծանօթութիւն. — Մատեանս է քառածալ, ունի 250 էջք. ոչ այնչափ մաքուր տպագրութիւն։

ԺՈՂՈՎԱԾՈՒ (Տպ. 1718)

Գրչին ճակատը. — «Սկիզբն գրոցս որ կոչի Ժողովածու. Գիրքըս այս ճառէ զպատմութենէ նախանշարցն սրբոց։ Այլ և. . . ,

ի Հայրապետութեան Տեառն Աստվածատուրի Սրբազան Կաթուղիկոսի, ամենայն Հայոց։ Տպագրեցեալ ի թվականիս մերում ՌՃԿԶ (1718)։ Սեպտեմբերի Թ։ Արդեամբ և գոյիւք Դաւտեցի Պարոն Աստուատանին։»

Ցիշատակարանը։ — «Փառք . . . Էնոս ի կատար դպրության հոգեներդ գիրքս այս, որ կոչի Ժողովածու։ Ասացեալ ի սրբոց վարդապետաց . . . ։ Ի թվականութեանս մերում ՌՃԿԼ ինն։ Յուլիս ԺԵ։ Ի Հովանապետութեան սրբոյ Էջմիածնի Տեառն Աստուածատրոյ գերերջանիկ Կաթողիկոսին ամենայն Հայոց։ Եւ ի Պատրիարքական տեսչութեան Երուսաղէմի Տեառն Գրիգորի սրբազան բանիբուն վարդապետի Բազիշեցւոյ։ Եւ առաջնորդ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Տեառն Յովհաննէսի քաջիմաստ և լիաշնորհ Վարդապետի Բազիշեցւոյ։ . . . Այլ և յիշեցէք միով Աստուծոյ ողորմիայիս աքուլիսոյ գաւառեցի մաղասաանց մեքոնի որդի Բոստամ, և զծնողս Զարմանազանն և եղբարքս Աստուածատուրն և զպենեատն, և զքոյրքն Շահսուլթանն և զՇուշանն։ Ի տպարանի Կարապետի որդի Աստուածատուրի . . . ։

Ծանոթութիւն։ — Մատեանս է քառածալ, ունի 508 էջք։ Տպագրութիւնն բուսական յաջող։

ԺՈՂՈՎԱԾՈՒ (Տպ. 1795)

Ցիշատակ։ — «Գիրք կոչեցեալ Ժողովածու։ Յորում նախ՝ ճառէ զնախկին ծնողսդ մերոյ՝ զԱդամայ և զԵւայէ, և հետևապէս զայլոց նախահարց սրբոյ։ Ապա՝ քարոզք պիտանացուք, ասացեալ ի սրբոց վարդապետաց, հեշտ շարադրութեամբ յօգուտ հասարակութեանց։ Տպագրեցեալ ի Հայրապետութեան Գերագահ Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Տեառն Գրիգորիսու Սրբազան Կաթողիկոսի ամենայն Հայոց։ Եւ ի Պատրիարքութեան Սրբոյ Երուսաղէմի Տեառն Յովակիմայ երէցանկագոյն Վարդապետի։ Վեհափառ հրամանաւ մեծի սրբայանիստ մայրաքաղաքիս Կոստանդնուպօլսոյ Սրբազան Արքի Եպիսկոպոսի Տեառն Զաքարեայ . . . աստուածարան Պատրիարքի։ Ի թուին Հայոց ՌՃԼԽԹ. Հոկ. ԺԷ։ Ի Տպարանի Յովաննէսեան Պողոսի։»

Ցիշատակարանը։ — «Փառք . . . որ ետ կարողութիւն մեզ նուաստիցս՝ Տպել և յաւարտ հասուցանել զքաղցրալուրս զայս գիրք, որ կոչի Ժողովածու։ Ասացեալ ի սրբոց վարդապետաց . . . ։ Ի տպարանի՝ Մատենի Աստուածատուրեան տիրացու Յովհաննէսի որդւոյ՝ տիրացու Պողոսի անդիտանս ծառայի . . . Այլ և

յիշեսջիք զաշխատաւորն գործարանիս գրելուցի տիրացու Զաքարեայն և զտիրացու Յովհաննէսն . . . »

Ծանօթութիւն. — Մատեանս է ութածալ, ունի 450 էջք. միջակ տպագրութիւն։

Այս գրքէն եղած է արդեօք ուրիշ տպագրութիւն ևս, թէ ի Կ. Պոլիս և թէ՝ այլուր, առ այժմ չենք գիտեր, ապիկայ ժամանակը պիտի յայտնէ։

Յայտնի է արդէն, որ Կ. Պոլսոյ մէջ առաջին անգամ Հայերէն տպագրութիւնը սկսեց 1567 ին, և առաջին անգամ տպուեցաւ Այբբենարան մը, և 1868.–69 երկու տարուան մէջ այլևս հինգ գիրքեր, որք են՝ Ժամագիրք, Մաշտոց, Պատարագամատոյց, Տաղարան և Տօնացոյց։ Որեմն երեք տարուան ընթացքի մէջ միայն վեց գրեանք։ Այս տպագրութիւններն եղան Արզար Թօխատեցիի ձեռօք և այն տառերով որ իր հետ բերած էր Վենետիկէն, ուր Սղմոս մը միայն տպագրուած էր 1565 ին։ Արզարը վախճանեցաւ 1869 ին Կ. Պոլսոյ մէջ, այս պատճառաւ և այլ զանազան պատճառներով, Արզարի որդին Սուլթան չ տպարանի տառերն առնլով Հոռոմ գնաց։ Այդ թուականէն մինչև 1677 թուական, ամբողջ դար մը և աւելի Կ. Պոլսոյ մէջ հայ տպարանի անուն մը և գործունէութիւն մը երբէք չը տեսնուիր, միայն թէ 1677 ին Երեմիա Չելէպի Քէօմիւրճեան Պոլսոյ մէջ տպարան մը կը հաստատէ և մի միայն երկու գիրք կը տպէ։ և շարունակութիւն մը չենք տեսնէր, այս լռութիւնն ալ կը տեւէ մէկ քսան տարիներ։

Բայց Կ. Պոլսոյ հայ տպարաններու գործունէութիւնն կ'սկսի, 1698 էն, այս թուականին և տասնեւութերորդ դարու սկիզբներն Կ. Պոլսոյ մէջ հինգ հատ տպարաններու անուններ կը քննենք, մին Պէկ Օղլի, մին Պարիարքարանի մօտ, և միւսներն անդին ապին, որոց տէրերն էին՝ Մարսուանցի Գրիգոր, Պալեցի խօճա Կարապետի որդին Աստուատատուր, Սարգիս ոմն, և Էջմիածնայ տպարան ընդ հովանեաւ Ս. Սարգսի ղորավարին, և այլն,

Էջմիածնայ տպարանի գործունէութիւնը երկու տարի միայն տեւեց (1700, 1701.), և ի լոյս ածեց միայն 4 գրեանք։ Պէկ Օղլի տպարանն մինչև 1718 շարունակուած կ'երևի, և անկէ յետոյ անունն չը յիշատակուիր, հրատարակած է եօթն հատ գիրքեր, միւս երեք տպարաններն, այս հարիւր քսան տարուայ ընթացքին մէջ (1698 – 1718), հրատարակած են 46 գրեանք

և չարունակելի։ ասենք առ այժմ մեզ ծանօթ եղածներն են, ասենցմէ այն տպագրութիւններն որք անծանօթ մնացած են գրական և գիտական աշխարհին, հետզհետէ պիտի ծանօթացնենք, բայց մեր երկրորդ յօդուածով պիտի գրենք «Եղեռն Խմաստասէրք» անուն գրքին վրայ, որ վեց անգամ տպագրութիւն տեսած է հայերէն, և երկու անգամ ալ համառօտակի թարգմանութեամբ հայատառ թրքաբարբառ։

Հայ տպագրութեան սկզբնաւորութեան (1565) փառքն, մինչև վերջին ատեններս Արգար գպիր Թօխաղեցիին կը սըրուէր, բայց վերջին խուզարկութիւններ որոշ և ստոյգ կերպիւ ցուցուցին թէ՝ Աբդարէ չատ տարիներ յառաջ, կէս դարէ աւելի յառաջ, 1512ին տպագրութեան գիւաէն 56 տարի յետոյ արդէն Յակոբ ումն հայազգի, Վենետիկի մէջ կարգ մը հայերէն գիրքեր տպագրած է և հրատարակած, որոց մասին ընդարձակ տեղեկութիւններ տուած եմ, Վիեննայի «Հանդէս Ամսօրեայ» պատուական ուսումնասիրութիւնի մէջ (Տե՛ս անդ, 1894 եր. 357)։ Մեր հետզհետէ տալիք տեղեկութիւններով ալ կը կարծենք թէ հայ տպարաններու գործունէութիւնը ի յայտ ածելով անոր պատմութեան ամբողջացման փոքր ինչ ծառայութիւն մը կ'ընենք։

1896 Յունիս 11 Կեսարիա։

Տ. Վ. Պ.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԷՊՔ Մովսէս Խորենացու հայոց պատմութեան մէջ։ Փոքր աղբիւրների ուսումնասիրութեան։ Գ։ Խոլոպեանց։ Մոսկվա, 1896։

Մովսէս Խորենացու հայոց պատմութիւնը դարերի ընթացքում առաջին տեղն է բռնել հայոց պատմական գրականութեան մէջ, և չարունակում է մինչև այսօր նոյն տեղը գրաւել և բանասիրական գրականութեան մէջ, թէպէտ չատ տարրեր վիճակով։ Մինչև անցեալ դարի վերջերը նա հանդիսացել է իբրև միակ արժանահաւատ աղբիւր հայոց հնագոյն պատմութեան, և նրա ամեն մի խօսքը ընդունված է եղել սրբութեան հաւատով՝ ինչպէս ս. գրքի խօսք։ Նա իր հեղինա-

կաւոր անձնաւորութեամբ, ինչպէս ս. Սահակի և Մեսրոպի ա-մենասիրելի աշակերտ, իր ցոյց տուած խորին հմտութեամբ, վսեմ, ճարտար և ուժեղ ոճով, իր յիշատակած աղբիւրների բարձր վաւերականութեամբ ստեղծել է հայոց նախնական ժամանակի մի այնպիսի պատմութիւն, որ դարերի ընթացքում ծառայել է իբրև ուսման առարկայ, իբրև մի անհասանելի օ-րինակ, որին ձգտել են նմանել յաջորդ պատմագիրները, նը-րանից վկայութիւններ են բերել, քաղուածներ են արել։

Սակայն քննադատութիւնը դիտութեան բոլոր դաւառներն էլ մուտ գործելով՝ չօչափեց և Խորենացու պատմութիւնը. հետզհետէ երևան եկան բազմաթիւ քննական ուսումնասիրու-թիւններ այս պատմութեան մասին, կասկածի ենթարկվեցան նրա նշանաւոր աղբիւրը — Մար Աբաս Կատինան, հեղինակի անձնաւորութիւնը, բարեխղճութիւնը, արժանահաւատութիւ-նը, նոյն իսկ դարը՝ երբ նա ապրել և գրել է։ Քանի դնում են աւելանում են այսպիսի քննական ուսումնասիրութիւններ Խո-րենացու մասին, և ներկայումս տարի չէ անցում, որ մի քանի աշխատութիւններ երևան չը հանէ նոյն նիւթի վրայ։ Այս քննութիւնները, սակաւ բացառութեամբ, աւելի և աւելի խոս-տանում են և աննպաստ դառնում Խորենացու պատմութեան համար, գրեթէ ձգնում են ոչնչի հաւասարացնել նրա պատ-մական արժէքը և խիստ վատ դոյնով դուրս բերել նրա հեղի-նակին։ — Այսօր էլ ուրեմն Խորենացու պատմութիւնը առա-ջին տեղն է գրաւում հայ բանասիրական գրականութեան մէջ՝ իբրև առարկայ խիստ քննադատութիւնների, և պէտք է ասել՝ Խորենացու պատմութեան դարերի ընթացքում վայե-լած չափազանց մեծ յարգանքը՝ բէգրէսի բնական օրէնքով՝ փոխվել է չափազանց մեծ անարգութեան, նախնեաց կոյր հաւատը դէպի այս գիրքը՝ առաջ է բերել ծայրայեղ կասկա-ծութիւն։

Այսպիսի մերկացուցիչ–քննադատական աշխատութիւն է և պ. Գր. Խալաթեանցի «Հայկական վէպը»։ Ներածութեան մէջ, որ 1894-ին տպագրված է լուսաւորութեան մինիստրու-թեան ամսագրում, յարգելի հեղինակը մանրամասն թուում է Խորենացու պատմութեան մասին եղած քննադատութիւնները, անցեալ դարի քսանական թուականներից սկսած մինչև վեր-ջին ժամանակներս, և համառօտում է այս քննադատութիւն-

ների էական կէտերը։ Ցեսոյ եզրակացնում է, որ հայոց պատմահայր կնոջի ժամանակի և նրա պատմութեան արժանահաւատութեան մասին ծագած կարևոր խնդիրները չեն կարող վերջնականապէս լուծվել՝ մինչև չուսումնասիրվեն այս «առեղծուածային» հիղինակի բոլոր աղբիւրները, ոչ միայն յայտնի աղբիւրները, որոց յիշատակում է ինքը Խորենացին, այլ և դաղտնի աղբիւրները, որոնց թիւը բաւական մեծ է և որոնց յայտնադործելը նոր լոյս կարող է սփռել հայոց պատմութեան և դրականութեան վրայ։ Պրոֆէսոր Կարրիէր արդէն յայտնադործել է մի քանի յունարէն աղբիւրներ. այժմ հարկ է ձեռնարկել հայերէն աղբիւրների ուսումնասիրութեան, որին և նուիրված է իր այս աշխատութիւնը։

Սակայն այս աշխատութիւնը, չը նայելով իր պատկառելի ծաւալին — աւելի քան 420 մեծադիր երես — չէ սպառում ամբողջ նիւթը. սա միայն Խորենացու վիպական (արդեամբ կամ ենթադրված) աղբիւրների ուսումնասիրութիւն է, այնպէս որ Խորենացու պատմութեան 194 գլուխներից քննում է միայն 40ը և մասամբ չոչափում է 13)։ Մնացած մեծադոյն մասի, կամ Խորենացու պատմական աղբիւրների ուսումնասիրութեանը հեղինակը նուիրելու է առանձին աշխատութիւն։

Հնար չունենալով նոյն իսկ համառօտիւ թուել հեղինակի չոչափած բոլոր խնդիրները՝ մենք սահմանած ենք մեջ բերել միայն այն էական եզրակացութիւնները, որոնց նա հասել է այս աշխատութեան մեջ։ Սրանց մեջ կարևորութեամբ և նորութեամբ առաջին տեղն է բռնում անշուշտ այն՝ թէ «Հայկական վէպը, որից միայն Խորենացին է օգտվում՝ ժողովրդի ստեղծագործութեան արդիւնք չէ, այլ գրաւոր ծագում ունի, և առաջ է եկած Ս. Գրքի և ուրիշ թարգմանական և ինքնուրոյն գրուածքների նիւթերի աւելի կամ նուազ յաջող մշակումից», կամ ուրիշ խօսքով՝ ազգային վիպասանութիւնները, Գողթան երգերը, որոնցից Խորենացին, իր վկայութեամբ, յաճախակի օգտվել է՝ զոյութիւն չեն ունեցել։ Դրանք ստեղծված են մեծ մասամբ Խորենացուց և փոքր մասամբ Անանուն հեղինակից, հետևողութեամբ և բանաքաղութեամբ Ս. Գրքից և ուրիշ գրաւոր աղբիւրներից։

Երկրորդ եզրակացութիւնն այս է, թէ Խորենացու պատմութիւնը գրված է Ը. դարի վերջերում կամ Թ. դարի սկզբներում։ Այս հայեացքը նոր չէ. մի քանի տարի առաջ նոյնը

յայտնել, էր և Ա. Կարբիէր, բայց նոր են հեղինակի մէջ բերած մի քանի վկայութիւնները յոդուտ այս եզրակացութեան։ Այսպէս՝ նա աշխատում է ապացուցանել, 1) թէ Անանունի պատմութիւնը (Սերէոսի պատմութեան սկզբում գրված Ա. դպրութիւնը) որից անպայման օգտվել է Խորենացին՝ գրված է Բ. դարում կամ Թ. ի սկզբին։ 2) Թէ Խորենացին օգտվել է Պրոկոպիոսից, Սերէոսից, Անանեա Շիրակացուց և Ղևոնդից, որոնք Զ.—Ը. դարի պատմագիրներ են։ 3) Թէ Խորենացու պատմութեան մէջ յիշված մեռնողը (Վաղարշակ իրան մեռնող հագցնող է ընտրում Քանանացոց ցեղից) և պատասաքաղը (Արտաշէս Բ. Արգամին ի միջի այլոց իրաւունք է տալիս՝ ոսկի գդալ և պատասաքաղ գործածել) քաղաքակրթութեան պատմութեան մէջ շատ ուշ են երևան գալիս։ առաջինը բիզանդական մատենագրութեան մէջ յիշվում է միայն խաչակիրների արշաւանքի ժամանակ (այսինքն ոչ առաջ քան ԺԱ.—ԺԲ դարը)։ բայց Խորենացին, հեղինակի կարծիքով, կարող էր ծանօթ լինել նրա հետ և աւելի կանուխ, Ը.—Թ դարերում, Բիւզանդիայից զուրս ուրիշ ճանապարհով։ Երկրորդը, պատասաքաղը, առաջին անգամ յիշվում է Նոյնպէս ԺԱ. դարում, իբրև մի բոլորովին նոր անծանօթ բան՝ Բիւզանդիայից Վենետիկ տարված մի իշխանական ձեռքով։ Արդ հեղինակը կարծում է, թէ Բիւզանդիայի արքունիքում պատասաքաղը անպատճառ հէնց Ժ. դարում գոյութիւն չստանար, այլ գոնէ մի դար առաջ կար, ուստի և Խորենացին կարող էր զբաղեցնել այն Թ. դարում։ 4) Թէ տեղերի և անձերի շատ անուններ, որոնք պատահում են Խորենացու պատմութեան մէջ՝ Ե.—Ը. դարերի մատենագիրներին անծանօթ են, այլ գործածական են դառնում Թ. դարից սկսած։ Մեր հեղինակը խոստանում է իր աշխատութեան երկրորդ հատորում աւելի ճիշտ որոշել այս պատմութեան գրութեան ժամանակը։ Նոյնպէս և նրա հեղինակի առեղծուածային անձնաւորութիւնը։

Երկրորդ կարևոր եզրակացութիւնն է՝ որոշել այն աղբիւրները, որոնցից Խորենացին օգտվել է իր պատմութեան միջոցներ։ «Յայտնի» աղբիւրներից, որոնց յիշում է Խորենացին՝ հեղինակը կեղծիք է համարում Ալեքսը և Պողոսի երգերը, կասկածելի է համարում Բարդածանը, Արիստոն Պելլացին։ Իսկ «գաղտնի» աղբիւրներ, որոնցից պատմագիրն օգտվել է, առանց նրանց անունն իբրև աղբիւր յիշելու՝ հե-

գինակի կարծիքով եղել են՝ սուրբ Գիրքը, Յովհաննու Յայտնութիւնը, Եւսեբիոսի ժամանակագրութիւնն ու եկեղեցական պատմութիւնը, Սուտ-Կալլիսթենէս, Փիլոն Երբայեցին, Լաբուբնան, Եփրեմ Ասորի, Գրիգոր Նազիանզացին, — հայերէն թարգմանութեամբ. հայերէն գրվածքներ — Ագաթանգեղոս, Փաւստոս, Եզնիկ, Ղազար Փարպեցի, Եղիշէ, Սեբէոս, Անանիա Շիրակացի, Անանուն (Մար Աբաս), Ղեւոնդ. յունարէն աղբիւրներ — հատուածներ Հոմերոսից, Դիոդորոս Սիկիլիացի, Յովսէփոս, Կղեմէս Ալէքսանդրացի, Պրոկոպիոս Կեսարացի և մի ուրիշ աղբիւր։ Այս աղբիւրներից փոքր մասի գիւտը միայն պատկանում է գրքի հեղինակին, Գլխաւորապէս հայ աղբիւրները, Ղազար Փարպեցուց սկսած մինչև Ղեւոնդ (Ե—Ը դար)։

Բացի այս գլխաւոր, գրքի բուն նպատակը կազմող եղրակացութիւններից՝ նրա մէջ ուսումնասիրուած են ուրիշ շատ երկրորդական խնդիրներ, որոնց յիշատակութիւնը մեզ շատ հեռուն կը տանէր։ Արդէն վերոյիշեալ կէտերն այնքան կարեւոր են, որ եթէ պատուզվեն՝ Խորենացու պատմութիւնը կը կորցնէ իր պատմական նշանակութիւնը և հեղինակի անձնաւորութիւնը վերջնականապէս կընկնի բանասիրութեան աչքում։ Հասկանալի է ուրեմն, թէ ո՞րպիսի հետաքրքրութիւն պէտք է շարժէ բանասիրութեան մէջ ալ Խալաթեանցի այս աշխատութիւնը։

Մենք մեզ թոյլ ենք տալիս, առանց մանրամասնութիւնների մէջ մտնելու, յայտնել մեր ընդհանուր տպաւորութիւնը այս գրուածքի մասին։ Առաջին տպաւորութիւնը, որ մենք ստանում ենք այս աշխատութեան ընթերցումից՝ այն է, որ նա գրված է համապրական մեթոդով։ Հեղինակը ոչ թէ քննել է երևոյթները և իր քննութիւնների հիման վրայ որոշ եզրակացութեան է եկել, այլ նախապէս մտքում մի հայեացք է ստեղծել, և յետոյ աշխատել է իր նախառեալ հայեացքն ապացուցանել երևոյթների քննութեամբ։ Օրինակի համար, ենթադրենք, որ ս. Գրքում Եսթերի պատմութիւնը կարդալիս, հեղինակն յանկարծակի նկատել է ինչ որ նմանութիւն այդ պատմութեան և Խորենացու Արտաշէս Սաթինիկ վէպի մէջ. — երկուսումն էլ թագաւորները կոչում են Արտաշէս և թագաւորում են 40—42 տարի, երկուսումն էլ թագուհիները գրեթէ նոյն անունով (Ասթինէ—Սաթինէ—Սաթինիկ), երկուսումն էլ հարսանիքի պատմութիւն, երկուսումն էլ անհաւատարմաս-

թեան մասին խօսակցութիւն, երկուսումն էլ սպանութիւն. — այս նմանութիւնը հեղինակի մտքում մի ըլլս է ծագեցնում, թէ Խորենացու Արտաշէս—Սաթինիկ վէպը յօրինված է Եսթերի պատմութեան նմանողութեամբ, այն ինչ Խորենացին ասում է, թէ այդ վէպը Գողթան երգերից է առել։ Ուրեմն — մտածում է հեղինակը — Խորենացին կեղծում է, ինքը շարադրում է չեղած պատմութիւն և նրան աւելի յարդ տալու և արժանահաւատ կացուցանելու համար՝ ծածկում է իր դրաւոր աղբիւրը և վերագրում է Գողթան երգիչներին։ Ուրեմն—շարունակում է նա իր եզրակացութիւնները—Գողթան երգերի անունով Խորենացու մէջ բերած հատուածները կասկածելի են և Խորենացու շարադրած են։ Այս կարծիքը արմատանում, համոզմունք է դառնում հեղինակի մէջ, թէ՝ իր և թէ ուրիշ բանասէրների դրած մերկացուցիչ—քննադատական աշխատութիւնների տպաւորութեան տակ։ Նախառեալ հայեացքը արդէն պատրաստ է։ Այժմ հեղինակը վերցնում է զանազան գրուածքներ, որոնք նրա կարծիքով Խորենացուն պէտք է ծանօթ լինէին, և աշխատում է նրանց մէջ գտնել այնպիսի հատուածներ, մինչև անդամ բառեր՝ որոնք պատահում են Խորենացու մէջ բերած վէպերի մէջ և. . . Նրա աշխատանքը պսակվում է։ յիրաւի զանազան գրքերի մէջ պատահում են այդպիսի նման ոճեր ու բառեր, որոնք աւելի ևս համոզում են հեղինակին, թէ Խորենացին ազգային վիպասանութիւնից չէ օգտվել, այլ անունով բերած հատուածները՝ իր շարադրութիւն են։ Ահա պատրաստ է տեսութիւնը և ապացուցված է փաստերով։

Որչափ ստոյգ է մեր տպաւորութիւնը գրուածքի այս համադրական մեթոդի մասին՝ չգիտենք—դուցէ հեղինակը բոլորովին տարբեր մեթոդով է հասել իր եզրակացութեան։ Բայց մեր տպաւորութիւնը հիմնվում է այն աչքի ընկնող երևոյթի վրայ, որ ա. Խալաթեանցի՝ մէջ բերած համեմատութիւնները Խորենացու վէպերի և կարծեցեալ աղբիւրների մէջ՝ չատ անդամ այնքան բռնազրօս, անհաւանական են, որ մեր կարծիքով՝ առանց նախառեալ հայեացքի՝ դժուար էր որ և է կապ գտնել նրանց մէջ։ Տասնեակներից բերենք մի համառօտ օրինակ։ Խորենացին պատմում է, թէ Արտաշէսի հարսնախօսութիւնը Ալանաց արքայադուստր Սաթինիկի հետ՝ վիպասաններն այսպէս են երգում.

«Հեծաւ արի արքայն Արտաշէս ի սեաւն զեղեցիկ,
Եւ հանեալ զսակէօղ չիկափակ պարանն,
Եւ անցեալ զբազկս զարծուի սրբութեան ընդ գեան,
Եւ մրգեալ զսակէօղ չիկափակ պարանն՝
Ընկէց ի մէջք օրիորդին Ալանայ
Եւ չատ ցաւեցոյց ըզ մէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր»։

Պ. Խալաթեանց իբրև ապրիւր այս երգին՝ բերում է հետևեալ հատուածները. «Բերցեն զպատմութեանն արքունի և զերիվարն յորում արքայ հեծանէր»։ Արասցես օգս ոսկիս . . . և զվիճակն խորանին ի չիկակարմիր մորթոյ»։ Եւ ձգեաց արքայ (Արտաշէս) առ Եսթեր զդաւազանն ոսկի, և յարեաւ Եսթեր երթեալ ի սենեակն արքայի»։ «Օրիորդ գուսար Բաբելացւոց . . . և ոչ ևս յաւելուցուս կոչել զիրդ և փափուկ»։ Այս հատուածներն առնված են Ս. Գրքի զանազան տեղերից — Եսթեր, Զ. Գլ., Ելից՝ ԻԶ, Եսթեր՝ Ը. և Ելից՝ ԻԿ, և նպատակայարմար կերպով դասաւորված են այնպէս, որ վէպի մէջ և այս հատուածներում մի քանի բառ նոյն յաջորդութեամբ պատահեն։ Ի հարկէ, այս կերպով կարելի է ապացուցանել, որ ոչ մի ինքնուրոյն գրուածք գոյութիւն չունի, որովհետև ամեն մի գրուածք բաղդատելով ուրիշ տասնեակ գրուածքների հետ՝ միշտ կարելի է սրանց մէջ գտնել առանձին նախադասութիւններ, որոնց մէջ պատահէին համեմատված գրուածքի խօսքերից մի քանիսը։ Վերոյիշեալ վէպի մէջ, մի կողմ թողնելով ժողովրդական բանահիւսութեան դրոշմը, որ նրա վրայ երևում է շատ կողմերից՝ կայ իմաստի ներքին ամբողջութիւն — նա բանաստեղծական նկարագրութիւն է դիւցազնական առևանգման, այնպիսի առևանգման՝ որ վայել է մի թագաւորի՝ երբ սա առևանգում է ուրիշ թագաւորի աղջիկ։ Իսկ կարծեցեալ աղբիւրների մէջ, որչափ էլ ջանալու լինինք՝ ոչ մի կերպով չենք կարող որևէ նմանութիւն գտնել վէպի իմաստի, մտքի ամբողջութեան հետ։ Ցիշեալ վէպի հետ անշուշտ աւելի մեծ նմանութիւն ունեն հեքեաթների մէջ այն տեղերը, երբ թագաւորի զաւակն սև ձին հեծած գնում փախցնում է մի ուրիշ թագաւորի աղջկան, յաղթելով ճանապարհին զանազան դժուարութիւնների (Տես Հայ-ժողովրդական Հեքեաթներ, Ա-թերորդ գիրք, 44 — 45 և այլն)։ Ահա՝ ուրեմն ո՞ր տեղ պիտք է փնտռել նմանութիւն,

նոյն իսկ աղբիւր հին ժողովրդական վէպի—զարմեալ ժողովրդական բանահիւսութեան մէջ։

Այսպիսի են ս՝ Խալաթեանցի համեմատութեան միւս տեղերն ևս՝ երբ միմեանց դէմ են դրվում Խորենացու իբրև ժողովրդական վէպ մէջ բերած հատուածները և նրանց կարծեցեալ դրաւոր աղբիւրները։

(Մնացեալն յաջորդ թուով)

ՍՏ. ՄԱԼԽԱՍԱՆՑ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐ*

240. Առաղիուշ. — Եալովցու բառ — Սպիտակ փուշ մ'է պոպղուն որոյ ծիլը կուտեն։

241. Սաւուակ. — » » — Կանանչ բանջար մ'է ծաղիկը կապոյտ. նոյնպէս կուտեն։

242. Էրկուռնակ. — » » — Եղունքի մեծութեամբ երկճղի կանանչ խոտ մ'է զոր արդար իւղի մէջ կ'ղնեն անուշ հոտելու համար։

243. Կոզր. — » » — Մոխրադոյն փուշ մ'է որոյ ծաղիկն սպիտակ տերևները միջակ դեանի վերայ կը տարածուի արմատը հատ՝ զոր կեղևելով կուտեն, համը քաղցր։

244. Կապատեն » » — Լեռնային մոխրադոյն փուշ մ'է մ'ել նոյնպէս կեղևելով կուտեն։

245. Կծկծուկ » » — Կարծր կանանչ մի քիչ երկայն լեռնային խոտ՝ անատուններուն կերցնելով կը պարարտացնեն։

246. Կիծուկ. — » » — Կանանչ տերևով բանջար, տերևներն ճիշդ ուռենոյ տերևի նմանութիւն ունին, երբ ծիլի երկարութիւնը կէս կանդունի չափ լինի կսկսի փշոտիլ և դոյն զոյն ծաղիկներ բանալով սիրուն տեսք մը կստանայ։

247. Յորենուկ. — » » — Տաճկերէն պուզաքիը ըսուած խոտեկ։

248. Ճուտ. — » » — Սաղարեուտ տեղեր բուսնող ծիլ մ'է որու գլուխը ճիշտ ցորենի հասկի նման արմատին ներքև կապինի մեծութեամբ խնկանման պտուղ ունի, համը քաղցր, տեղացիք կուտեն։

249. Կանռոնի. — » » — Նոճիի ձև ունեցող երկու կանդուն երկայնութեամբ խոտ մ'է, զոր տանիքներու վերայ կը փռեն և վրան հոգով կը ծածկեն որպէս զի հովն և անձրևն մէջի բնակողները պահպանեսին։

250. Էնտարէս. — Օվանջքցու բառ — Վայրի կեռաս, շատ փոքր, կոթը կարճ։

* Տե՛ս Ա. Մ., թիւ 9։

251. Կաքնակ. — Օվաճաքրցու բառ. — Կոնտոնչ խոտ՝ կաթի նման հիւթ մը կայ, տերևն ճիշտ կաղնի տերևի նման, ծաղիկն բարակ փեռուրի պէս սպիտակ փունջ մը կերնէ, այս խոտը կովի կաթը կ'առատացնէ։

252. Պարմէար. — Ջէյթունցու բառ. — Կեսուր։

253. Քեռմէր. — » » — Մամիկ։

254. Քեռպոպ. — » » — Պապիկ։

255. Պարբնպոպ. — » » — Կերսար կամ զրբանջ զրբն անխարաբար գործ կածուի։

256. Նիյինցու. — Սիսեցու բառ — Պատրոյգի կապոց։

257. Պուչու. — » » — Մանուկ. արու պատանի, և երբեմն փաղաքշօրէն մեծերու ալ կ'ըսուի։

258. Զուլուպ. — » » — Աղնուական բամբակ։

259. Սիկէ. — » » — Քղանցք։

260. Արբզու. — » » — Լուծը արօրին ձողին կապելու երկայն կաշի։

261. Քուշ. — » » — Վառարան կամ օճախ։

262. Խոնթխանբալ. — Ճաւատցու բառ — Քթին տակն ընթընթալ։

263. Բլինր. — » » — Թանձր մանիլ քառակուսի կամ եռանկիւնի կտրուած։

264. Ճնաել. — » » — Ժողովել։

265. Ճմուռ. — » » — Տաք հացը իւղի մէջ մանրելով մեզրախարն չաղելով կուտեն։

266. Քարանել. — Իզմիրցու բառ — Հինցնել։

267. Կարկաս. — Մանիսացու բառ — Երբ ջուրի մէջ նիւթ մը հալեցնես ու երբեմն մանր մանր անհալ փշուրներ մնան կարկաս կ'ըսուի։

268. Պէկրանել. — » » — Աչքը տեսած տեղը ձեռքը խոթել, բան մը փնտռել։

269. Կեկել. — » » — Մէջքէն վար ծռիլ։

270. Խմշիլ. — » » — Խնայել։

271. Ճլբկանել. — » » — Նեղել։

272. Չոպ. — » » — Ժամանակ։

273. Խզռել. — » » — Պատռել։

274. Շաբշրփ. — » » — Հոգեթափ ան անց կրուկի։

275. Տարբա. — » » — Նախադատիթ (աւլու)։

276. Մրսի գլխիդ. » » — Ամեն երեսդ։

277. Կուկուզ. — » » — Ինկերը ցցած գետին նստիլ։

278. Անպաշար. — » » — անձարակ։

279. Հմուկ ճմուկ. » » — Փիչ քիչ խնայելով։

(Շարունակելի)

ԽՍՔՋԱՏՈՒՐ ԴՐ. ՏՐ. Վ. ԱՐԻՍՏԱԿԵՍԱՆ

ԽՄԲԱԳԻՐ-ՏՆՕՐԷՆ Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՄԵԾ ՎԱՃԱՌՔՏՈՒՆԿ

ԱՆԿԼՈ ԽՈԹՐԸՆ ԳՈՐԾԱԿՑԱԿԱՆ ԼՈՒՍ.

Ամառնային եղանակի յուսուկ սպրանքներու ճամ հաւաքածոյ մը ստացանք, այն է

ԲԱՐԻՋԻ ԱՊՐԱՆՔՆԵՐ

Մետաքսէ, Սիրամանի գերնանէ և կաշիէ գօտիներ և ձերմակ ձեռնոցներ, Պայուսակներ, Ճամբորդութեան մոխրագոներ, Անկլիական կաշեհատուկներ, Հոմահար, Գաւազան, Զաճազան հոտեղէններ, Կանանց Մարդոց և Տղայոց համար հոմանոցներ ևն։

ԴՈՒԼՊԱՆԵՐՈՒՆ ԲԱՇԻՆ

Շապիկներ կէս-բամբակեայ
Ֆլանելէ բաճկոնակներ՝ Քրիստոսի համար
Ջարտաներ Վէլոսիբեդի համար
Կօշիկներ՝ » »
Ցարդեայ գլխարկներ թատրէ ճամկոտով
Կօշիկներ, Գոտիներ լոգանք՝ համար
Անդրավարտիք » »

ՀՆԵՐՄԱԿԵՂԷՆՆԵՐՈՒՆ ԲԱՇԻՆ

Ջինեոպներ և սրբիչներ ծոմայի և տաճկական բազանեայ համար,
Դիրեու սրբիչներ՝ սպիտակ և գունաւոր։ Անկողնի վերմակներ (բիգէ)
Ձերմակ կաւաներ՝ վարտիքի, սաւանի և կանանց շապիկի համար և այլն։

Կը ծանուցանենք Գ. կարգաց օրձներու՝ առ այդ արտաքսուտին վերաբերեալ ամէն նիւթեր և գործիքներ կը ծախենք՝ այնպիսի աժան գիներով՝ որք ամէն մրցումի դէմ կ'հանեն։

Օղակներ պղնձեայ կահերու, Զանազան ձիներ, Բոդանիներ, Դրամի գունտներ, Ագաբիներ, Պառատակ, Կղպանք։ Վարագոյրի օղակներ՝ Զինձէն փայտէ, Պուլեթներ՝ Սեղանի, Թրիսնախոտի և Բազմոցի համար, Փակոցներ՝ կարտոպի, Գարանի, Լուսարարանի և պատներու համար, Փարանի և Բորթմանթոյի համար ակիշներ, Ջասանակաւոր կղպանքներ (Ամոն գիրիա)

Ագոց, Մարմ, Աքսան, Թորնոփիտա, Ռենդի, Մերաս, Ֆերիչ, Մեծ քերիչ, Հերիւն, Քանակ, Զոլի, Էրուէս, Կարիքն, Հարիւրաչափ քանակի ևն ևն։

ՏՊԱՐԱՆ-ԳՐԱՏՈՒՆ

Մ. Մամուրեան

Մօտա-Փողոց Թիւ 3 (Ս. Ա. Եէ-ՆՆ Եկեղեցւոյ դիմաց)

ՏՊԱՐԱՆ *կ'ընդունի ամեն տեսակ տպագրական գործերու յանձնարարութիւններ:*

Կ'տպէ — Գրքեր, Տեղեկագիրներ, Յայտարարութիւններ, Ցանուցումներ, Հաշուեցոյց, Ընկերագիր, Նամակագրութիւն, Տոմսեր, Հարսնեստոմս, Մահագրեր եւ այլն եւ այլն խիստ ազամ գիներով:

ԳՐԱՏՈՒՆ — *կ'ընդունի ամեն տեսակ հրատարակութեանց յանձնարարութիւններ. Կ'գտնուին ամեն տեսակ գիրք, դասագիրք, վեպ, Հայերեն, Անգլիերեն, Ֆրանսերեն եզուաւ Նոյնպէս դպրոցական տետրներ.*

Սեպհական դասագրքերու վրայ երբ մեծամասնակ գնումներ ընեն կարող է մինչեւ **20%** *է* **25%** *զեղչ ընել, իսկ գրավաճառներու համար մասնաւոր պայմաններ, երբոր տեղեկութիւնք խնդրուին.*

Թղթատան ծախսի գնորդներու վրայ է.

Գրատան մէջ կ'գտնուին Մեծամուն Աբիկեան հիմնարկի բոլոր դասագիրքերն, մեծամասնակ գնորդներու մինչեւ **20%** *զեղչ առանց համրու կամ թղթատան ծախսի.*

Ամեն տեսակ եւ ամեն չեզուի հանդիսաներու եւ օրագիրներու բաժանորդագրութիւնք կ'ընդունուին առանց յանձնարարողէքի.

Ս. ՄԱՄՈՒՐԵԱՆ բաժանորդագրութիւն փոխարարդ կրնան դիմել Տպարան - Գրատուն: Հինգ բաժանորդ գտնողի 1 տարեկանիրա ձրի կ տրուի:

Ս. Մ-ան մէջ ծանուցումներ եւս կ ընդունուին խիստ ազամ գներով:

Ամեն տեսակ գործառնութեանց համար վճարմանք կոնիակ են, իսկ յանձնարարութեանց համար կանխավճար մ'ուզեն:

Ամէն ամսոյ Հեղինակներն ու Հրատարակիչներ որ կ'փոխարին իրենց գրքերն Ս. Մ-ան մէջ ծանուցուած և գրատան ցուցակներին մէջ ցուցադրուած տեսնել, պարտին եէ-ի-ն օրինակ մեզ դրկել.

Հարգեր՝

Տպարան - Գրատուն

Մ. Մամուրեան — Իզմիր